

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԻՆ Պ. ՊԱԼԵՎ ԳՐԱՄԱՆ

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ԲՈՂՋԱԹԻՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ, ՈՒ ՔԱՐՏԵՐՈՎ,

ՊԱՏՐԱՍՏԵԱ

Կ. Յ. ԲԱՍՄԱՉԵԱՆ




Ա. ՊՈՒՐՈ

ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՎՆՑ

20, Զահենակերպար, 20

1909



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Պ. ՊԱԼԵՆՅ ԳՐԱՏԱՆ

1999 5

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

№ 197

Տպարան ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐՁՈՒՄՈՆ


№ 22

Ա. ՏԱՐԻ

ԲԱԶՄԱԹԻԻ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ, ՈՒ ՔԱՐՏԵՎՈՎ.

ՊԱՏՐԱՍՏԵՑ

Կ. Յ. ԲԱՍՄԱՉԵԱՆ



Ա. ՊՈՂԻՄ

ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՅ

20, Զահմաֆելար, 20

1909

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Բոլորովին նոր ոճով դասագրքերու պատրաստութեան պէտքը շատոնց զգալի եղած էր մեր մէջ, և, պարտ կը համարիմ խոսովանիլ, թէ նոր զրութեամբ դասագրքերու պատրաստութեան ձեռնարկներ ալ եղան, զանազան ձիւզերու համար, բաց ի Հայոց Պատմութեանէ, որուն պատրաստութեան ինձ կը վիճակի այսօր, առաջարկութեամբ Տեաք Պ. Պալենցի, որ այնքան օգտակար հրատարակութիւններ ունի մեր դպրոցներուն համար :

Ներկայ դասագիրքը քննական գործ մը չէ, այսինքն՝ նորագոյն հետազօտութիւններու համաձայն պատրաստուած ըլլալով հանդերձ՝ բոլորովին փոխուած Հայոց Պատմութեան մը չէ, բայց իր աւանդած եղանակով աշակերտը պատրաստելու կաշուած է դասագրքու Բ. և մանաւանդ Գ. տարբիններուն մէջ դիւրին կերպով ըմբռնելու ինչ որ նոր է և ննեական :

Որպէս զի աշակերտն առանց ձանձրոյթ կրելու. իր ազգին պատմութիւնը սիրով կարդայ, ամէն մէկ գլուխն երկու մասի բաժնեցի, — առաջինը՝ խիստ համառօտ, իբրեւ Դաս (leçon), իսկ երկրորդը՝ քիչ մը ընդարձակ, իբրեւ Պատմած (récit): Այսպէսով աշակերտը նախ Դասին մէջի բոլոր ըստածներն ամբողջապէս գոյց կ'ընէ, և ետքը Պատմածին անցնելով, սորված Դասին մէջ հանդիպած և կամ անոր հետ կապ ունեցող պատմական կարեւոր դէպքի մը մանրանամութիւնը կը կարդայ, հետաքրքրութեանէ մղուած : Ուսումը հաճելի ընծայելով

գ 303-ա

Հֆ. 306

է, որ կարելի կ'ըլլայ մարտել տալ աշակերտին։ Այս է
Եւրոպայի մէջ ընդունուած հիմակուան դրութիւնը։

Բնական է, այս տեսակ համառօտ դասագրքի մը մէջ
կարելի չէր աւանդել մեր ազգին ամբողջ պատմութիւնը։
այն պարագային՝ ոչ միայն մանկավարժուական չպիտի ըլ-
լար գործը, այլ և պէտք պիտի ըլլար մի միայն անուն-
ներ ու թուականներ յիշելով անցնիլ։ Հոս իմ գլխաւոր
նպատակս եղած է՝ մեր անցեալ փառաւոր ու նոյն իսկ
տիսուր օրերուն ամենէն նշանաւոր գէուզերն իրարու-
շղթայելով, աշակերտին ճանչցնել ու սիրցնել իր ազգը։

Պարիս, 1 Յունի. 1909

Ա. Յ. Ռ.

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ա. ԴԱՍ — Հ Ա. Յ Ա. Ա Տ Ա. Ն

1. Մեր նախնիքներու բնակած երկիրը մեր
ազգին անունով կոչուած է Հայաստան, որ հիմա
երեք պետականներու բաժին ինկած է, այսինքն՝
պարակական, ուռասկան ու տաճկական պետու-
թիւններու։

2. Հայաստան շատ բարերեր և բազմամարդ
երկիր մը եղած է. նոյնպէս հանքերէն բաւական
հարստութիւն պահած է իր ծոցին մէջ։

Պատմած. — ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԻ

Հայաստանի ամենէն ընդարձակ ժամանակուան սահ-
մանն էր — հիւսիսէն՝ Պոնտոս, Վրաստան և Աղուանից
երկիրը, արեւելքէն՝ Կասպից ծալ և Պարսկաստան, հա-
րաւէն՝ Ասորեստան և Միջազետք, (Մուբինեանց հարլա-
տութեան ժամանակ՝ Միջերկրական ծով), իսկ արեւ-
մուտքէն՝ Ալիւս գետ։ Այս սահմաններն այսպէս չեն
մնացած միշտ, այլ արտաքին յարձակումներու հետեւ
անքով փոփոխութիւններ կրած են։

Հայաստան իր ամբողջութիւնով չորս գլխաւոր մա-
սերու կը բաժնուի. 1. Մեծ Հայք, 2. Փոքր Հայք, 3.

Կիլիկիա, և 4. Հայոց Միջագետք։ Մեծ Հայք բուն Հայաստանն է. հո՞ն է որ, կը գտնուին մեր պատմական ամենանշանաւոր վայրերը, ինչպէս՝ Եղմածին, Սնի, Արտաշատ, Արմաւիր, Կարին, Վան, Մուշ, Երգնակայ, և լու։ Իսկ Կիլիկիա՝ մեր վերջին հարստութեան կայսան եղած է։

Հայաստանի գլխաւոր լեռներն են՝ Արարատ կամ Մասիս, Արագած, և Տաւրոսի լեռնաշղթան. իսկ նշանաւոր գետերն են՝ Եփրատ, Տիգրիս, Երասի կամ Արաքս, Կուր և Ճորոխ։

Հայաստանի մէջ երեք մեծ լիճ կայ, մեր պատմիչներու կողմէ «Ճով» կոչուած, այսինքն՝ Վանայ կամ Բղնունեաց ծով, Գեղամաց ծով, և Կապուտան ծով կամ Ուրմիացի լիճ։

Հարցարան. — 1. Մեր նախնիկներու բնակած երկիրն ի՞նչ կը կոչուի : Որո՞նց բաժին ինկած է : — 2. Ի՞նչպէս երկիր մը եղած է Հայաստան : = Ի՞նչ զիտէք Հայաստանի աշխարհազրութեան մասին :

Բ. ԴԱՍ. — ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

3. Ազգային աւանդութիւնը կ'ըսէ, թէ մեր ազգին նախահայրն եղած է Հայկ անունով հրսկայ մը, որ թէլ անունով ուրիշ հակայի մը հետ պատերազմած է :

4. Պատերազմի արդիւնքն այն եղած է, որ թէլ սպաննուելով Հայկէն, իբ բանակն ալ ցիրուցան եղած փախած է, իրենց ամբողջ հարստութիւնը ձգելով Հայերուն :



ՀԱՅԿ ՆԱՀԱՄԵՏԸ

Պատմած. — ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԸ

Ազգային աւանդութիւնը մեր ազգին ծագման մասին կ'ըսէ, թէ մենք Հայկանունով մէկին մէրած ենք, և անոր համար մեր ազգն ալ Հայ կոչուած է մերիններէն։ Իսկ Հայկ աշխարհն եկած է Նոյ նահապետին թուան թունէն։

Կը պատմնն, թէ Հայկ՝ Բաբելոնի սշտարակացինութենէն ետք՝ հոն ափապետող Բէլ անունով բանակալի մը չհազարնդելու համար եկաւ հասաւ Վանայ ծովին հիւսիսային կողմերը, և այնաւել իր բնակութիւնը հասաւասելով, առաջին հոյ գիւղն՝ Հայկակեն՝ հիմնեց, շղակայ մարդիկներն իրեն հնագանդեցուց, և նահապետական կեանքով մը ապրիլ սկսաւ: Բէլ խմանալով այս ամէնը, նախանձեցու Հայկի վիճակին, և անոր մարդ զրկեց որ դայ իր քով բնակի: բայց Հայկէն մերժողական պատասխան ստոցաւ: Սառով վրայ Բէլ՝ բորբոքած՝ Հայկի վրայ սպառերազմի գնաց: Երկու բանակներն իրարու հանդիսացան Վանայ ծովին հարաւային կողմերը, և հարուստով մը Հայկ իր նեար միսելով Բէլի կուրծքին, միւս կողմէն դուրս հանեց: Բէլի զիմուռները սարսափած՝ ցիրուցան եղան, և իրենց բոլոր ունեցածն հոն ձըգելով փախան:

Հայկով կ'ոկոի մեր ազգին առաջին հարստութիւնը, որ կը կոչուի՝ Հայկազն հարսութիւն:

Հարցարան. — Յ. Ո՞վ է եղած մեր ազգին նախահայրը: Ի՞նչ ըրած է: — 4. Ի՞նչ եղած է արդիւնքը: = Ո՞վ էր Հայկ: Ի՞նչպէս պատերազմեցաւ:

Գ. ԴԱՍ. — ԱՌԱՋԻՆ Ա. ՇԽԱՐ ՀԱԿՈՂՈՒԹԻՒՆ

5. Կ'աւանդեն, թէ Հայկ նահապետի սերունդէն Արամ անունով քաջ և հայրենասէր մէկն իր երկերը դրացիներու յարձակումներէն ազատելու համար պատերազմեցաւ անոնց հետ, և յաղթեց:

6. Ա. յաղթութենէ ետք՝ Արամի դրաւածերկիներով վանայ ծովին մինչեւ Կեսարիա ընդարձակ ապրածութիւն մը ստացաւ Հայաստան:



ԱՐԱՄ

Պատմած. — Ա. Ր Ա. Մ

Սրամ՝ իբրեւ տիպար հայրենասփութեան՝ երբ առաջ սու որ դրացի երկիրներու տէրերը միշտ նեղութիւն կուտան իր մարդիկներուն, զօրք ժողվեց և յարձակեցաւ անմնց վրաց։ Երկրին գլխաւոր թշնամին էր Նիւքար Մարտոց իշխանուր, որ Հայոց հոգերը գրաւելով հարի կ'առանար անմնց տէրերէն։ Սակայն Սրամ պատերազմի պահուն գերի բանեց զայն, և Սրմաւիր տանելով՝ աշաւարակին ծայրը գամել տոււու ճակատէն։ Յեսայ զէնքերը դարձուց իր միւս թշնամիներուն՝ Սաորեստամի Բարչամ Եշխանին ու արեւմտ'ուն երկիրներու տէր Պայտապիս իշխանին դէմ։ Պայտապիս Արամին հզօր բանալին հաղածուելով՝ փախաւ ապաստանեցաւ Միջերկրական ծովի կըզդղիներէն մէկը։ Սրամ անոր հոգերը գրաւելով անմնց վրաց կառավարիչ-դրաւ Մշակ մնաննով մէկը, որ հիմուկուան Կեսարիա կամ Գայութի քաղաքին աեղն իր անունով ամոււր քաղաք մը շննեց, բայց ժողովուրդը Յոյն ըլլալուն՝ չըր կրնար Մշակ անունն արաստանել, ովէ կ'ըսէր Մազակ (=Մաժաք)։

Սրամի քաջութեան ու յաղթաւթիւններուն լուրն հասսու մինչեւ Ասորեստամ, որուն թագաւորը՝ Նինսա՝ Արամի հետ բարեկամութիւն հաստատելով, իր երկրորդն անուանեց, և իրաւունք տոււու իրեն ովէս մարդարտազմուրդ խոյր դնել։

Ճարցարան. — 5. Ո՞վ էր Արամ։ Ի՞նչ ըրաւ։ — 6. Արամի մեռնով Հայաստամի սահ հանները մինչեւ ո՞ւր տարածուեցան։ = Արամի քաջութիւնները կրնա՞ք պատմել։

Դ. ԴԱՍ. — Ա. ՍՈՐԵՍՏԱՆՑԻՆԵՐՈՒ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄ


7. Ասորեստամի-թագուհին՝ Շամիրամ՝ լսելով Հայոց Արայ իշխանի գեղեցկութեան համբաւը, մարդ զրկեց անոր և իր քով հրաւիրեց, առաջարկելով ամուսնանալ հետը։

8. Արայ՝ Շամիրամի առաջարկը մերժեց։ Ասոր վրայ՝ Շամիրամ Հայաստան արշաւեց, և պատերազմի տաք միջոցին Արայ սպաննուեցաւ Շամիրամի զօրքերէն։

Պատմած. — Ա. Ր Ա. Յ ԳԵՂԵՑԻԿ ՈՒ ՇԱՄԻՐԱՄ

Հայրենի աւանդութեան համեմատ՝ Սրամի որդին և յաջորդը, Սրայ, շատ գեղեցիկ մէկն էր, որուն համբաւը տարուած էր ամէն տեղ։ Ասորեստամի Շամիրամ թագուհին Սրայի գեղեցկութեան գովեստը լսելուն պէս՝ թանկազին ընծաներով մարդ զրկեց անոր, և հետն ամուսնանալու առաջարկով Նինուէ հրաւիրեց զայն, միանգամայն խոստանալով իր երկրին թագաւորութիւնն անոր յանձնել։ Սրայի մերժելուն վրայ՝ Շամիրամ զօրք ժողվեց և արշաւեց Հայաստան, իր զօրքերուն պատուիրելով չդպչիլ Սրային, այլ ողջ ողջ իր առջև քերել։ Բայց պատերազմի տաք միջոցին Արայ սիսալմամբ զարնուեցաւ Շամիրամի զօրքերէն։

Հայերն իրենց պետին մահը տեսնելով աւելի կատաղեցան, և Ասորեստամնցիներու վրայ զօրաւոր յարձակում մը գործեցին։ բայց Շամիրամ խարդախութեան դիմնով՝ Սրայի դիակը մէջտեղէն վերցնել տոււաւ, և զրանիերն



ԱՐԱՅ ԳԵՂԵՑԿԻ ԴԻԱԿՆ ՈՒ ՇԱՄԻՐԱՄ

անոր նմանող աւրիշ մէկին հազցնել տալով հրապարակ
հանեց . ասանկով չփոթութիւն մը ինկաւ Հայոց բանո-
կին մէջ , և յաղթանակը տարառ Շամիրամ :

Հարցարան. — 7. Ո՞վ էր Շամիրամ: Ի՞նչ ըրաւ: — 8. Աքայ
ընդունեց: Նետեւանքն ի՞նչ եղաւ: — Ինչո՞ւ Շամիրամ արշաւեց
Հայաստան, եւ ի՞նչպէս յաղթեց :

Ե. ԴԱՍ. — ՀԱՅՈՅ ԱՊՈՀԻԿ ԹԱԳՈՒՈՐԸ



ՊԱՐՈՅ

9. Աքայի մեռնելէն ետք Հայերն Ասորեստան-
ցիներու իշխանութեան տակ մասած էին, բայց շատ
տարիներ յետոյ Պարոյը անունով քաջ իշխան մը

ուրիշ ապստամբներու հետ մէկ եղած՝ արշաւեց
Ասորեստանի վրայ :

10. Ասորեստանի թագաւորութիւնը ջնջուեցաւ, և Պարոյր թագ դնելով՝ անկախ թագաւոր հռչակուեցաւ :


Պատմած. — ՊԱՐՈՅՐ ԹԱԳԱԿԻՐ

Պարոյրի իշխանութեան ժամանակ Մարտաց Կիաքսար թագաւորը, որ Հայոց պէս Ասորեստանի գերիշխանութեան տակ կը գանուէր, բռնակալութեան լուծը թօթափելու համար ապստամբութեան դիմոց, և Պարոյրն իրեն օդնութեան կանչելալ՝ միասին յարձակեցան նիմուէի վրայ : Ասորեստանի Սարդանաբաղ թագաւորը չարաչար կերպով յաղթուեցաւ, և իր տէրութիւնը ջնջուեցաւ : Ասոր վրայ Կիաքսար ինքզինքն անկախ թագաւոր հրաչակեց, և Պարոյրի ալ՝ իբրև վարձատրութիւն ցոյց տուած քաջութեան և իրեն տուած օդնութեան՝ արքայական թագ տաղով Հայոց թագաւոր պատկեց : Սյապէսով Հայաստան ազատեցաւ Ասորեստանցիներու լուծէն, և բոլորովին անկախ թագաւորութիւն մը եղաւ :

Հայկէն մինչև Պարոյր թագաւոր չէինք ունեցած, այլ միայն նահապեանէր կամ իշխաններ . Պարոյրն է, որ մնը աւածին թագաւորն եղաւ :

Հարցարան. — 9. Արայի մահով ի՞նչ եղած էր Հայոց վիճակը: Պարոյր ի՞նչ ըրաւ: — 10. Ի՞նչ եղաւ: = Հայաստան ի՞նչպէս նորէն իր անկախութիւնն ստացաւ: Ո՞վ եղած է Հայոց առաջին թագաւորը:

Զ. ԴԱՍ. — ՏԻԳՐԱՆ Ա.



ՏԻԳՐԱՆ ԵՐՈՒԱՆԴԵԱՆ

11. Տիգրան՝ մեր Երուանդ թագաւորին որդին էր, որ իր խելացիութիւնով սկսաւ Հայաստանը չէնցնել և հարստացնել:

12. Տիգրան հայ բանակը կազմակերպելով ո՛չ
միայն հայկական երկիրները դրաւող թշնամինե-
րու վրայ յարձակեցաւ, այլ և Փոքր Ասխա բնա-
կող Յոյներու մէկ մասին վրայ ալ տիրեց :

Պատմած. — Տիգրանի ՊԱՏԵՐԱԶՄՆ ԱԺԴԱՀԱՅՈՒ ԴԵՐ

Մարաց Աժդահակ թագաւորը շատ կը նախանձէր Տիգրանի ու Պարսից թագաւոր Կիւրսափ միջնւ հաս-
տառուած բարեկամութեան վրայ մանաւաճուդ սաստիկ կը վախնար Կիւրսոէ, կառակածելով որ անիկա օր մը Տիգ-
րանի օգնութիւնով կուգայ կը զրաւէ իր երկիրը : Աժ-
դահակ Տիգրանի վրայ ստոկալի երազ մըն ալ տեսնելով՝
բոլորովին վախի մէջ ինկաւ : Ուստի Կիւրսան ու Տիգ-
րանն իրարմէ բաժնելու համար Տիգրանը մէջաւովին վեր-
ցնելու ու խորհուրդը յդացաւ . և անոր համելու
նպատակով ամուսնացաւ Տիգրանի քրոջը՝ Տիգրանուհի
հետ : Ամուսնութենէ ետք Աժդահակի իր նպաստակն յացտ-
նեց Տիգրանուհին, և սպանալիքներով խօսք առաւ
անկէ, որ Տիգրանուհի ինքն իսկ կատարէ այս ոճիրը :
Բայց Տիգրանուհի գաղանի կերպով ամէն բան իմաց
առաւ իր եղբօր : Աժդահակ իր ծրագրին յաջողութեան
վրայ վսաւա՞ Տիգրանին մարդ զրկեց և տեղ մը ժա-
մանդրութիւն տուաւ : Բայց Տիգրան ասոր գաղանիքը
գիտնալուն՝ բարմաթիւ գօրքերով Աժդահակի բանակին
վրայ քալեց, և՝ յարմար մէկ վայրկեանին՝ իր ձեռքով
իսկ զարկաւ սպաննեց թշուառականը :

Հարցարան. — 11. Ո՞վ էր Տիգրան: — 12. Բանակին հետ
ի՞նչ ըրաւ: = Ինչո՞ւ պատերազմեցաւ Աժդահակի դէմ:

Է. ԴԱՍ. — Վ. Ա. Հ. Ա. Գ. Ն

13. Տիգրանի որդիներէն մէկը՝ Վահագն՝ յա-
ջորդելով իրեն՝ քաջութեան մէջ անուանի եղաւ :

14. Ասոր համար Վահագնի անունով կուռ-
քեր շինեցին և Հայաստանի ու Վրաստանի մէջ
պաշտեցին :



ԿՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Պատմած. — ՀԱՅՈՑ ՀԻՆ ԿՐՈՆՔԻ

Քրիստոսի աշխարհ գալէն առաջ Հայաստանի ժողո-
վուրդը կուսպաշտ էր : Հայերն ոչ միայն կուռքերու առ-
ջեւ երկրագութիւն կ'ընէին, այլ աւելի հին ժամա-
նակներէ սկսած կը պաշտէն նաև բնութիւնը, ինչպէս՝
ծառ, քար, ջուր, կրակ, կենդանի, և այլն : Եւսոյ սկր-
սան պաշտել երկնային մարմններն ալ, օրինակ՝ արեւը,

լուսինը, և ուրիշ աստղեր: Ոգեպաշտութիւնն ալ գոյցութիւն ունէր մեջ, և մենէ աղեկներուն տրուած զօրութիւնն ալ հին ոգեպաշտութեան մէկ մնացորդն է:

Երբ կուռքերու գործածութիւնն սկսաւ, ամէն մէկ կուռքի մէյ մէկ պաշտօն տրուելով՝ Հայաստանի զանազան աեղերը փառաւոր մեհեաններ շինուեցան և անոնց մէջ զեակզուեցան:

Վահագն յաղթութեան չաստուածն էր, որուն պաշտօնն էր՝ իրեն դիմողներուն բաշխել զօրութիւն ու յաղթութիւն: Ասոր գլխաւոր մեհեանը կը գտնուէր Սշտիշատի մէջ, ի Տարօն:

Մեր հին նահապետներէն Հայկ ալ իր քաջութեան պատճառով սաստուածներու կարգ անցած էր, և՝ ժողովրդի կարծիքով՝ երկնային սաստի մը կամ համաստեղութեան մը փոխուած, որ կը սպաշտուէր Հայերէ:

Հարցարան. — 13. Ո՞վ յաջորդեց Տիգրանի: — 14. Ի՞նչ շինեցին Վահագնի անունով: — Ի՞նչ էր Հայոց հին կրօնը: Ի՞նչ բաներու կը պաշտէին: Վահագն ու Հայկ ինչի՞ կարգ անցան:

Ը. ԴԱՍ. — ՎԱՐԴԱԿԱԿ

15. Պարթեւներու Արշակ Մեծ թագաւորը թշնամիներու ձեռքէն ազատելով՝ Հայաստանը, իր Վաղարշակ եղբայրն Հայոց թագաւոր պատկեց:

16. Այսպէսով հիմք դրուեցաւ մեր Արշակունեաց հարատութեան, որ Հայկազանց շրջանէն առելի փայլուն եղաւ:



ՎԱՐԴԱԿԱԿ

Պատմած. — ՎԱՐԴԱԿԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Վաղարշակ Հայոց գահը բազմելուն պէս՝ սկսաւ բարենորոգումներ մացնել երկրն մէջ. և որովհեան ինք հայ չէր, նախ և առաջ ուզեց մեր ազգին պատմութիւնն ուսումնասիրել, և անոր համեմատ վարուիլ. բայց իր

դիւանատան մէջ գոհացուցիչ ո և է տեղեկութիւն չգըտնելով, Մար Իբաս անունով գիւանական մէկը զրկեց իր եղօր, աղաչելով որ թոյլ տայ Նինուէի դիւանատան մէջ վնտուել ուզածք: Մար Իբաս գնաց հասաւ Արշակի քով, և Վաղարշակի յանձնարարականը տուաւ, որուն վրաց Մար Իբաս Նինուէի ճոխ դիւանատունն տուաջնորդուեցաւ, և հնա Հայոց մասին գանուած բոլոր տեղեկութիւններն օրինակելով Վաղարշակին բերաւ: Ասիկա մեր պատմանացը Մովսէս Խորենացի գլխաւոր աղբիւրն եղաւ, ինչպէս ինք կը պատմէ:

Ասկէ զատ՝ Վաղարշակ երկրին մէջ օրէնքներ դրաւ, քաղաքային ու զինուորական կարգեր հաստատեց, և այն օրէնքներուն գործադրութեան ու նոյն խակ իր վրայ հսկող մասնաւոր պաշտօննեամեր կարգեց, որպէս զի երբ ինք ալ անփրաւ գործ մը կատարէ, և կամ չարագործ մը պատմելէ թերոնայ, յիշեցնեն իրեն:

Վաղարշակ զանազան քաղաքներ ու գիւղեր ող շինեց, և Հայաստանի թշնամիներուն գէմ պատերազմելով փառաւորպէս յաղթեց:

Ճարցարան. — 15. Ի՞նչ ըրաւ Արշակ Մ'եծ: — 16. Ի՞նչ կոչուեցաւ անկէ հիմնուած հարստութիւնը: — 17. Ի՞նչ համբաւ ստացաւ: =ի՞նչպէս գտնուեցաւ Հայոց պատմութիւնը: Վաղարշակ ինչօր հաստատեց:

Բ. ԴԱՍ. — ԱՐՏԱՇԵՍ ԱՇԽԱՌՉԱԿՈՒ

17. Կ'ըսեն թէ Արտաշէս երբ ալքայական գահը բարձրացաւ, Հայաստանը Պարթևներու ազգեցութենէն աղատելու համար պատերազմ հրատարակեց անոնց գէմ, և յաղթեց:

18. Յետոյ յարձակեցաւ Փոքր Ասխայի մի քանի իշխանութեանց վրայ, և անկէ անցաւ Յունաստան, որուն մեծ մասին տիրեց:



ԱՐՏԱՇԵՍ ԱՇԽԱՌՉԱԿՈՒ

Պատմած. — ԱՐՏԱՇԵՍԻ ԶՈՐՈՒԹԻՒՆԸ

Մեր հին պատմիչներու խօսքին նայելով՝ Արտաշէս Ա. ծնած օրէն ի վեր քաջ և խելացի մէկն էր, և երբ Հայոց թագաւորութիւնն իրեն բաժին ինկաւ, առաջին գործն եղաւ իր երկիրը Պարթևեներու ազդեցութենէն ազատել, վասն զի Վաղարշակէն ի վեր Հայոց թագաւորութիւնը բոլորովին անկախ էր, այլ Պարթևեներու ձեռքին տակ և երկրորդական պետութիւն մը. ուստի՝ Արտաշէս անթիւ անհամար զօրքերով Պարթևեներու վրաց վագեց, որոնց թագաւորը հայ զօրքերու բազմութենէն սարսափած՝ Արտաշէսի կամքին հնազանդեցաւ. Հայաստան անկախ և աւաճնակարգ պետութիւն հաշակուեցաւ, իսկ Պարթևեստան՝ Հայաստանի երկրորդ: Մինչեւ այն տաեն Հայերն օտար թագաւորներու զրամները կը գործածէին, բայց Արտաշէս իր յաղթութենէն ետք իրեն իրաւոնք սեպեց իր տնօւնով ու պատկերավ գրամ տպել:

Արտաշէսի զօրքերուն բազմութեան մասին հին աւանդութիւնը կ'ըսէ, թէ անոնց արձակած նետերուն շատութենէն արեւին լոյսը կը խստարէր, և ցորեկը զիշերուան պէս մութ կ'ըլլար: Կ'ըսն նուե, թէ Արտաշէս իր զօրքերուն բազմութեան մէկ տակացոյցը տալու համար երբ հրաման ընէր, որ ամէն մէկը որոշ աեղ մը մէկ քար նեաէ, հոն բլուր մը կը ձեւանար:

Հարցարան. — 17. Ի՞նչ ըրաւ Արտաշէս: — 18. Հոռմայեցիներու կամ Յոյներու հետ ի՞նչ զործ ունեցաւ: — Պարթևեներու հետ ինչո՞ւ պատերազմեցաւ: Ի՞նչ կը պատմին Արտաշէսի զօրքերու մասին:

Ժ. ԴԱՍ. — § ի Գ Ր Ա Ն Բ.

19. Արտաշէսի մեռնելուն լուրը Յոյներու կամ Հոռմայեցիներու ականջը հասնելուն պէս՝ սկսան արշաւել Հայաստանի վրայ:

20. Բայց Տիգրան՝ Արտաշէսի որդին՝ անոնց լու դաս մը աալով ցիրուցան ըրաւ, և Փոքր Ասիայի վարչութիւնը յանձնեց իր ազգական Միհըրդատին:



Տ Ի Գ Ր Ա Ն Բ-ի վրամը

Պատմած. — ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄ

Միհրդատ Պանասոսի թագաւորն էր և Տիգրանի ազգականը, որով Հայոց ալ դաշնակից: Արդ երբ Հոռմայեցիներն եւրոպացի ու Ասիրիկէի ափերէ ևաք աչքերնին Ասիայի վրաց սնկեցին, Միհրդատ ու Տիգրան իրանց երկիրները վասնզի տակ տեսնելով յարձակեցան Հոռմայեցիներու վրայ: Սաոր մասնութեան մը հետեանքով Մի-

հրթատ յաղթուեցաւ, բայց թշնամին ձեռքը գերի չլցնալու համար անձնասպան ևզաւ : Խակ Տիգրան իր աղգականին մահուան լուրջ լսելով գնաց հաշտուեցաւ Պարթեներու հետ, և այս անդամ անսնց օգնութեան չորսիւ յաղթեց Հռոմայեցիներու : Հռոմայեցիները նորանոր մարդիկ զրկեցին Ասիա, Հայաստան արշաւելու համար, բայց Տիգրանի զօրապետները զանանք ալ յրտեցին փախուցին : Այս միջոցին Հայերն Երուսաղէմ մտնելով Հըրեից թագաւորն ու շատ մը Հրեաներ գերի բանեցին բերին Տիգրանին, որ զանանք Վան զրկելով բնակեցուց :

Հարցարան. — 19. Որո՞նք արշաւեցին Հայաստան : — 20. Ի՞նչ ըրաւ Տիգրան : — Հռոմայեցիներու հետ ինչո՞ւ եւ ի՞նչպէս պատերազմեցան Հայր : Ի՞նչ առիթով Հրեաները Վան դրեւեցան :

ԺԱ. ԴԱՍ. — Ա. Բ Տ Ա. Ի Ա. Զ Դ Պ Ա.

21. Տիգրանի յաջորդեց իր որդին Արտաւազդ, որ ստիպուեցաւ Հռոմայեցիներու դէմ բացուած պատերազմը շարունակել :

22. Բայց Հռոմայեցի զօրավար Անտոնիոս Խարդախութիւնով Արտաւազդը բռնեց, և Եգիպտոսի թագուհին ընծայ զրկեց :

Պատմած .— ԾԱ. ՐՈՒԿՆԱԿՈՒԹԻՒՆ ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒ
Պ Ա. Տ Ե Ր Ա. Զ Մ Ի Ն

Որովհեաւ Տիգրան Հռոմայեցիներու դէմ մլուած պատերազմի մը մէջ յաղթուելով խօսք տուած էր այլ ևս Հայաստանէ դուրս երկիրներու վրայ չարշաւել, բայց իր

խօսքը չէր բանած, Հռոմայեցիները Տիգրանը ձեռք բերելու և պատմելու համար շարունակ կ'արշաւեին Հայոց վրայ : Հռոմէական նախորդ զօրավարներու պարաւութիւնը սաստիկ գրգռում յուռած բերած էր Հռոմի մէջ . ուստի՝ վերջին անգամ ըլլալով իրենց Անտոնիոս անուն խստապիտ և պատերազմական գործերու քաջանմուտ միծ զօրավարին յանձնեցին բանակը և զրկեցին Հայոց վրայ :

Այս միջոցին Տիգրան մեռած էր . Հայոց գահը բազմած էր իր որդին՝ Արտաւազդ :

Արտաւազդը թոյլ և անհոգ մէկն էր . ուստի՝ նախ Հռոմայեցիներու հետ բարեկամութիւն հաստատեց, և խստացաւ Պարթեներու դէմ պատերազմի ժամանակ օգնել . բայց ոչ միայն իր խօսքը չկատարեց, այլ և գաղտնի կերպով Պարթեներու հետ միացաւ, և յետոյ Կոլկասեան ազգերու հետ մէկ եղած, արձակ համարձակ վազեց Հռոմայեցիներու վրայ, մինչեւ որ զանանք Միջադեպէն դուրս քչեց : Ասոր վրայ Անտոնիոս միծ բանակով մտաւ Հայաստան, Արտաւազդը խարէութիւնով բռնեց, և՝ իրեւ ընծայ՝ Եգիպտոսի Կղէոպատրա թագուհին զրկեց :

Հարցարան. — 21. Ո՞վ յաջորդեց Տիգրանի, եւ ի՞նչ զործ տնաւ : — 22. Ի՞նչ եղաւ վախճանի : Ինչո՞ւ Հռոմայեցիները կ'արշաւէին Հայոց վրայ : Ի՞նչպէս մարդ էր Արտաւազդ, եւ ի՞նչ միալ մամրու հետեւեցաւ :

ԺԲ. ԴԱՍ. — Ա. Բ Գ Ա. Ռ

23. Աբգար Ուռհայեցիներու թագաւորն էր :
Որովհետեւ Հայոց թագաւորը Հայաստանի հիւ-
սիսային մասին մէջ նատիլ ակսաւ, հարաւային
կողմի և մանաւանդ Միջադետքի Հայերն իրենց
թագաւոր ընդունեցան Աբգարը :



ԱԲԳԱՐ

24. Այս միջոցներուն աշխարհ եկած էր Քրիս-
տոս, որուն աշակերտներէն երկուքը Հայաստան
մտնելով քրիստոնէութիւնը քարոզեցին :

Պատմած. — ՀԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԵԼԻ ԻԹԻՒՆԵԼԻ

Քրիստոսի աշակերտներն երբ լրյա հուսառքը տարա-
ծելու համար բաժնուեցան ամէն կողմ, Հայաստան եկան
Թաղէոս ու Բարթողիմէոս առաքեալները, որոնք քրիս-
տոնէութիւնը Հայոց մէջ մտցնելով մեր ազգին առաջին
լուսաւորիչներն եղան : Ասոնք իրենց պաշտօնին մէջ ան-
համար գժուարութիւններու հանդիպեցան, տառապեցան
և հեթանոս Հայերէն շատ չարչարանք կրելով՝ իրենց գըլ-
խաւոր աշակերտներուն հետ միասին նահասակուեցան :
Անկէ ետք քրիստոնէութեան դէմ եղած հալածանքը
սաստկացաւ, բայց շատեր գաղանի կերպով կը պաշտէին
Քրիստոսը :


Սյա վիճակն երկու հարիւր տարիէ աւելի այսպէս
շարունակուեցաւ մինչև Ս. Գրիգոր Լուսաւորիչ, որ ան-
վեհեր կերպով ամէն անդ մկան քարոզել քրիստոնէու-
թիւնը, և միւս նահասակներու նման հեթանոսներէ չար-
չարուելէ ետք՝ վերջապէս յաղթանակը տարաւ, քրիս-
տոնեայ ընկելով ամբողջ Հայաստանը : Ասոր համար Ս.
Գրիգոր կոչուեցաւ՝ Հայոց երկրորդ լուսաւորիչը :

Ճարցարան. — 23. Ո՞վ էր Աբգար: Հայոց մէկ մասն ինչո՞ւ
իրենց թագաւոր ընդունեցան: — 24. Այս միջոցներուն ի՞նչ կարե-
ւոր դէպք պատահեցաւ: = Հայերն որո՞ւ ծեռքով եւ ի՞նչպէս քը-
րիստոնեայ եղան: Ս. Գրիգոր ինչո՞ւ «Լուսաւորիչ» կոչուեցաւ:

ԺԴ. ԴԱՍ. — Ա. Բ Տ Ա Ն Ե Ա Բ .

25. Արտաշէս Բ. բարի և խելացի թագաւոր մը եղաւ. ամբողջ երկերը շնչցուց, և զանազան բարեկարգութիւններ ըրաւ :

26. Արտաշէս ժողովրդէն այնքան սիրուեցաւ, որ իր մեռնելէն ետք երբ հողն իջուցին դագաղը, շատեր ինքզինքնին փոսին մէջ նետելով կ'ուղէին իրենց սիրելի թագաւորին հետ թաղուիլ :



ՍԱՅԻՆԻԿ ԵՒ ԱՐՏԱՇԷՍ Բ.

Պատմած. — ԱՐՏԱՇԷՏԻ ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ

Արտաշէս պատերազմի բանուած էր Սլաններու հետ. վասն զի Սլաններու թագաւորը՝ Վրացիներու հետ միացած՝ Հայաստանի վրայ կ'արշաւէր :

Հայաստանի սահմանագլխին վրայ երկու հակառակորդ գնդերն իրար կը նեղէին. բայց վերջապէս Սլանները յաղթուած՝ կուր գետին միւս կողմը փախան, Հայոց ձեւքը գերի ձգելով իրենց թագաւորին որդին :

Ալաններու թագաւորն իր որդին ազատելու համար Հայոց հետ հաշառուի ուղեց, և առաջարկեց որ Արտաշէս ի՞նչ պայման ալ դնէ, պիտի ընդունի. Արտաշէսի մերժումին վրայ՝ թագաւորին Սամինիկ աղջիկը գետեղը գալով սկսաւ աղացել, որ Արտաշէս իր եղբայրն ազատ թողու : Արտաշէս Սամինիկի խելացի խօսքերէն հիացած՝ խկոյն կամքը կատարեց, և անոր հետ ամուսնանալով երկու աշխատթիւններու միջև բարեկամական կտակ մը հաստատուեցաւ : Հայրաննեկան հանդէն այնքան ճոխ եղաւ, որ հարա ու փեսին վրայ սակի ու մարգրիտ թափեցին, ինչպէս հիմա ալ դրամ ու շաքար կը թափեն :

Հարցարան. — 25. Ի՞նչպէս թագաւոր էր Արտաշէս: — 26. Ի՞նչ պատահեցաւ թալման ժամանակ: — Ի՞նչպէս ամուսնացաւ Արտաշէս:

ԺԴ. ԴԱՍ. — Ա. Բ Տ Ա Ն Ի Ա Զ Դ Դ .

27. Արտաշէսի մեծ որդին Արտաւազդ Հայոց թագաւոր պատկուելուն՝ իր չար և նախանձու բնաւորութեան պատճառով իր քոյրերն ու եղբայրները քովէն հեռացուց :



28. Արտաւազգի համար կ'ըսեն, թէ աշխարհ
եկած օրն անոր մարմինը վճռվիները դողցան, և
տեղը դեւի մը ձագուկ դրին :



ԱՐՏԱՎԱԶԳԻ Բ.

Պատմած. — ԱՐՏԱՎԱԶԳԻ ՄԱՀԻ

Արտաւազգ իր նախանձուութիւնը ցոյց տուաւ նաև
Արտաչսի ժաղանքակ :

Աւանդութիւնը կը պատմէ, թէ Արտաւազգ տեսնելով որ ժողովրդին մեծ մասն Արտաչսի դագավին հետ թաղուելու համար փոսը կը նետուի, սկսաւ պառալ. «Դուն գացիր գացիր, բոլո՛ր ժողովուրդն ալ հետդ կը տանիս. եւ աւերակներո՞ւ պիտի թագաւորեմ» : Ասոր

վրայ Արտաչս բարկանալով իր գերեզմանէն ձայն տուաւ և իր որդին այսպէս անփծեց. «Մասիս լերան կողմերն որսի գացած օրդ՝ դեւերը քեզ բոնեն և Մասիս լեռը տանին պահեն, որպէս զի այլ ևս լոյս (աշխարհ) չտեսնես» : Ճիշտ ալ օր մը երբ Արտաւազգ Մասիսի կողմերն որսի գնաց, իր ձիով մէկաեղ խորունկ փոսի մը մէջ ինկաւ անհետացաւ, և մարմինը չկրցան գանել :

Ուամիկ ժողովուրդն իր թագաւորին անհետ կորսուին իմանալով, յիշեց Արտաչսի անէծքը :


Օր մըն ալ լուր տարածուեցաւ, թէ Արտաւազգ այրի մը մէջ շղթաներով կապուած է, և երկու շուն միշտ կը կրծեն շղթաները, որպէս զի անսնք մաշին, Արտաւազգ ազատի, և աշխարհը կործանէ . բայց, կ'ըսեն, դորբիններու մուրձերուն ձայնէն շղթաները նորէն կը զօրանային : Ասոր համար քրիստոնեայ դարբինները կիրակի օրերն անզամ իրենց մուրձերը մի քանի անգամ սովին կը զարնէին, որպէս զի Արտաւազգի շղթաները զօրանան :

Հարցարան. — 27. Ի՞նչ ըրաւ Արտաւազգ: — 28. Անոր ծնունդին համար ի՞նչ կը պատմեն: = Արտաւազգ ի՞նչպէս մեռաւ: Դարբիններն ի՞նչ կ'ընէին, եւ ինչո՞ւ:

ԺԵ. ԴԱՍ. — Վ. Ա. Դ. Ա. Բ Ն

29. Վաղարշ շինարար և հայրենասէր թագաւոր մը եղաւ։ Ա՛ս է շինած Վաղարշաւան ու Վաղարշապատ քաղաքները։

30. Վաղարշ հիւսիսային ազգերու դէմ երկու անդամ պատերազմելով յաղթեց, բայց ինք ալ պատերազմի գաշտին վրայ զարնուելով մեռաւ քաջութեամբ։



Ս. Է Զ Մ Ի Ա Մ Ի Ն

Պատմած. — Վ. Ա. Դ. Ա. Բ Ն Պ Ա Տ

Վաղարշապատ՝ Մէծ Հայոց Այրուրատեան նահանգին մէջ կը գտնուի, և մինչեւ հիմա գոյութիւն ունի։

Վաղարշ այս քաղաքը վինելով՝ թագաւորական աթուն հոս փոխադրեց, և մինիէ եռք Հայոց մայրաքաղաք եղաւ։

Վաղարշապատի կից կը գտնուի Ս. էջմիածնի վանքը, ուր կը հասափ Հայոց ընդհանրական Հայրապետը։ Ս. էջմիածնի տաճարը շինած են Ս. Գրիգոր Լուսաւորիչ ու Տրդաս թագաւոր։ Վանքին մէջ կան աղբային բաղմաթիւ հուռթիւններ, հայերէն ձեռագիրներու ճոխ հաւաքածու, տպարան ու Գէորգեան ձեմարան անունով մած դպրոց մը, որ աղքին կուտայ ուսեալ երիտասարդներ։

Էջմիածնի քով է՝ հիմա «Ծողակաթ» կոչուած վանքը։ Իսկ քաղաքին բուրս կը գտնուին Ս. Գոյիանէի ու Ս. Հռիփսիմէի վանքերը, որոնք վինուած են քրիստոնէութեան սիրուն նահատակուած համաստեն կյամերու և իրենց ընկերուհիներու գերեզմաններուն վրայ։ Այս տաճարներն հիմնուծ են նոյնպէս Ս. Գրիգոր ու Տրդաս։

Հարցաքննի. — 29. Ի՞նչպէս մէկն էր Վաղարշ եւ ի՞նչ ըրաւ։ — 30. Որո՞նց հետ պատերազմի բռնուեցաւ։ — Ո՞ւր է Վաղարշապատ։ Ի՞նչ նշանակութիւն ունի մեզ համար։ Ի՞նչ վանքեր կան րովերը։ Որո՞նք հիմնած են զանոնք։

ԺԶ. ԴԱՍ. — § Բ Դ Ա. Տ Ա. Տ

31. Տրդատ իր մանկութեան ժամանակ Հռոմ կը գտնուէր, ուր մի քանի քաջութիւններ ընելով ամենուն ուշադրութիւնն իր վրայ հրաւիրեց։

32. Հռոմի կայսրն երբ իմացաւ, որ Տրդատ

Հայոց գահաժառանդ իշխանն է, անոր գլուխը
թագ գրաւ ու շատ մը զօրք տալով Հայաստան
դրկեց :



ՏՐԴԱՏԻ ՄԿՐՏՈՒՄԸ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐՁԻ ԶԵՌՔՈՎ

Պատմած. — Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻԶ

Ս. ԳՐԻԳՈՐ ՏՐԴԱՏԻ ծառայութեան մէջ կը գըտ-
նուէր :
Օր մը՝ կտապաշտական հանդէսի մը ժամանակ՝ ՏՐԴ-

Դաստիամայեց Ս. ԳՐԻԳՈՐԻ Անահիտ չաստուածուհին
պատիւներ ընծայել . բայց որպէսհաեւ քրիստոնեայ էր
ԳՐԻԳՈՐ, չուզեց մասնակցիլ հանդէսին : Տրդատ թէեւ
ուզեց համոզել, բայց կարելի չկազաւ : Ասոր վրայ Ս.
ԳՐԻԳՈՐը սոսկալի չարչարանքներու ենթարկեց, որպէս
զի անիկա քրիստոնէութիւնը ձգէ և կտուք պաշտէ : Այս
միջոցին Տրդատ իմանալով որ Ս. ԳՐԻԳՈՐ իր հայրն
սպաննուղ Անսակին տղան է, դանիճներուն հրամայեց օձե-
րով ու կարիճներով լեցուն խորունկ փոսի մը (Խոր վի-
րապ) մէջ նետել :

Ճատ տարիներ սնւյած էին, երբ օր մը Տրդատ և
իր պալատականներն ու քաղաքացիները յանկարծ դի-
ւահարեցան : Գիշերը Տրդատի Խորովիդախա քոյրն իր
երաղին մէջ տեսնելով, որ սասոր միտկ ձարը՝ Ս. ԳՐԻ-
ԳՈՐ Խորովիրապէն հանելն է, մարդ զրկեցին և հանել
տուին : Ս. ԳՐԻԳՈՐ եկաւ, և սաստուածային հրաշքով
գիւտնաբներն առաղջացուց . յետոյ բոլորն ալ մկրանելով
քրիստոնեայ լրաւ, ու Տրդատի ընկերակցութեամբ մեհ-
եամնները կործ մնելով եկեղեցիներ կանգնեց անսնց տեղ :

Հարցարան. — 31. Ո՞ւր էր Տրդատ: Ի՞նչ ըրաւ հոն: — 32.
Ի՞նչպէս Հայաստան զնաց: — Ի՞նչ կ'ընէր Ս. ԳՐԻԳՈՐ: Տրդատ ի՞նչ
ըրաւ անոր: Տրդատի ի՞նչպէս քրիստոնեայ եղաւ:

ԺԷ. ԴԱՍ. — ՆՈՐԵԿԻՆ ՏՐԴԱՏ. Տ

33. Տրդատ Հայաստան մտնելով յարձակեցաւ Պարսիկներու վրայ, և զանոնք յաղթելով երկրէն դուրս քշեց :

34. Ասկայն ասովլ չդոհացաւ Տրդատ, այլ Պարսկաստանի վրայ արշաւելով Ասրպատականի մեծ մասը դրաւեց :



ԽՈՄՐՈՎԻԴՈՒԽԱՏ, ՕՏԱ ԵՒ ՏՐԴԱՏ

Պատման. — ՏՐԴԱՏԻ ՔԱԶՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Պատմիչնը Տրդատի ունեցած ուժին և կատարած քաջութիւններուն նկատմամբ շատ հետաքրքրական զրոյցներ կը պատմն. օրինակի համար՝ կ'ըսմէն, թէ Տրդատ

Հուոմի՞ մէջ երկու վայրենի ցալերու հետ կուռելով՝ անոնց կոսովներէն բռնեց և մէկ ցնցումավ երկուքն ալ փրցուց հանեց իրենց տեղէն : — Ուրիշ անգամ, դարձեալ Հուոմի՞ մէջ, կառք վազցնելու մրցաւմի մը ժամանակ, հակառակորդ մը Տրդատին զարմուելով կառքէն վար ձգեց . Տրդատ զայրացած՝ վազեց անոր ևսեւէն, և կառքն անա՞նկ ուժով բռնեց, որ ձիերը չկրցան իրենց վազքը շարունակել : — Հուոմէտկան բանակը պատերազմի մը երթալու ժամանակ զիշեր տանին քաղաքի մը առջեւ համելով գաները զոց գառաւ : Բանակին ձիերուն խոտ սիէտք էր : Տրդատ պատճ ի վեր մազլցելով միւս կողմն անցաւ, և այնակը պահապաններն ու շատ մը էշեր՝ խոտերու խուրձերով միասին իր բանակը նետեց : — Օր մին ալ Հուոմի կայսրին անդ ի՞նք մենամարտի երթալով՝ յանկարծ թշնամիին թէւերէն բռնեց, իրարու կավեց, և այն վիճակի մէջ կացարին ներկայացաց : Ասոր վրայ է որ Տրդատ Հայոց թագուուր եղաւ :

Հարցարան. — 33. Տրդատ ի՞նչ ըրաւ երբ Հայաստան մտաւ :
— 34. Ո՞ւր արշաւեց եւ ո՞ր երկիրը զրաւեց : = Տրդատ ի՞նչ նըշանաւոր քաջութիւններ ըրաւ :

ԺԸ. ԴԱՍ. — Ա. Բ Շ Ա. Կ Բ.

35. Ալշակ Պարսիկներու օգնութիւնով Հայոց թագաւոր պասկուեցաւ, բայց տարիներ եռք պարսկական զօրքերն ահադին բազմութիւնով Հայաստան արշաւեցին :

36. Այս արշաւանքին պատճառն այն էր, որ

Արշակ գահը բարձրացած ժամանակ խոստացած
էր տուրք տալ պարսկական կառավարութեան,
բայց իր խոստումը չէր կատարած, որով իրեն
դէմ գրդռեց Պարսիկները:



ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ


Պատմած. — ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

Արշակ Հայոց թագաւորներէ ամսնէն վասն եղաւ
իր անտիրու և անբարոյական ընթացքով: Այն ժամա-

նակուտն կաթողիկոս՝ Մեծն ներսէս, որ Ա. Գրիգոր
Լուսաւորչի թուան թուան էր, Արշակի ընթացքը անու-
նելով՝ անիծեց: Ներսէսի հետեւեցան նաև հայ նախա-
քարիները, որոնց և Արշակի միջեւ եղած հակառակու-
թիւնը սաստկացաւ օրէ օր: Արշակ նեղը մնալով սա-
կայն՝ ներսղութիւն ինողրեց ներսէսէն, և խոստացաւ իր
ընթացքը փափել և բրածներաւն վրայ ապաշխարել: Հաշ-
տութենէ և առ ներսէս Կ. Պոլիս զնաց, Արշակի և Հո-
ռոմիներու Վաղէս կայսրին մրջեւ խաղաղութիւն գոյա-
ցընելու համար, բայց Վաղէս ներսէսն աքարեց յունա-
կան կղզիներէն մէկը, ուսկից հաղիւ ազատեցաւ Վաղէսի
մոհը վրայ հասնելով:

Մեծն ներսէս չաս զործունեաց և շնարար կաթո-
ղիկոս մը եղաւ. Հայաստանի զանազան գաւառներուն
մէջ հաստատեց առքաստանոցներ ու հիւանդանոցներ,
բազմաթիւ վանքեր ու դպրոցներ, և ճամփաներու վրայ
շնել տուաւ իջեւոններ:

Հարցարան. — 35. Արշակ ի՞նչպէս թագաւոր պահուեցաւ:
— 36. Պարսիկներն ինչո՞ւ Հայաստան արշաւեցին: — Ո՞վ էր Մեծն
ներսէս: Ինչո՞ւ անիծեց Արշակը: Հաշտութենէ ետք ի՞նչ ըրաւ:
Ի՞նչ տեսա՛լ հայրապետ էր ներսէս:



ԺԵ. ԴԱՍ. — Պ. Ա. Պ

37. Արշակի արժանի զաւակն էր Պապ, որ իր հօր նման չար և մնի թագաւոր մը ըլլալով՝ աշտելի եղաւ ազդին։

38. Բայց վերջապէս իր պատիմը դառաւ, և Հոռոմներէ գերի բռնուելով կ. Պոլիս տարուեցաւ և դիմատուեցաւ։



ՄԵՇՐՈՒԺԱՆԻ ՊԱՏՇՈՒԽԱԾ

Պատմած. — ԴԱՒԱԾԱՆԻ ՄՌ ՊԱՏԺՈՒԽԱԾ


Արշակի գէմ ըմբսասացաղ նախարարներէ մէկին անունն՝ էր Մեհրուժան Արծրունի, որ՝ հակառակ Մեծն Ներսէսի միջամտութեան՝ չուզեց հաշտուիլ Արշակի հետ,

այլ գնաց միացաւ Պարսիկներու հետ, և անոնց Շապուհ թագաւորին հրամանով արշաւեց Հայաստան, աւրեց աւրքշակեց երկիրը։ Արշակ, որ այն ժամանակ Պարսիկներէ գերի բռնուած և Սնյուշ բերդին մէջ բանաւարկուած էր, այս եղածները լսելով անձնասպան եղաւ։ Շապուհ Արշակի մեռնելուն լուրին առնելուն պէս՝ Մեհրուժանը քովը կանչեց և խստացաւ զինք Հայոց թագաւոր պասկել, եթէ կարենաց բոլոր նախարարներն իր կողմ դարձնել ու ամրով հայ ազգը կրակապաշտ ընել։ Մեհրուժան այս անգամ առաջալունէ աւելի կատաղի կերպով յարձակեցաւ Հայաստանի վրայ, կործանեց բազմոթիւ վանքեր ու եկեղեցներ, մահեաններու վերածելով անոնց գլխաւորները, և՝ քրիստոնէութենէ հետք մը չճգելու համար՝ յունարէն բոլոր գրքերն այրեց։ (Այն տաեն մեր գրերը գեռ գանուած չեն, այլ յունարէն գրեր կը զործածէինք։)

Այս միջնորդն Արշակի Պապ որդին Մեծն Ներսէսի բարեխօսութիւններ և Հոռոմներու օգնութեամբ Հայոց թագաւոր պասկուելով գահ բարձրացաւ։ Մեհրուժան թէեւ փախաւ, բայց զօրմանը բանակ մը կազմելով նուրէն մասաւ Հայաստան։ Պատերազմի տաք միջնորդն Մեհրուժան գերի ինկաւ Հայոց ձեռք։ Զերբարակալով իշխանը՝ Սմբատ Բաղրատունի՝ ունոր պատիմը տալու համար կրակի վրայ կարմրած շամփուր մը ծուելով պասկ մը ձեւացուց, և յետոյ Մեհրուժանի գլուխն անցընելով, բառ։ «Դուն որ Հայոց թագաւոր ըլլալ կ'ուղէիր, ահա կը պատկեմ քեզ իմ հայրենական իշխանութեամբս։»

Հարցարան. — 37. Ի՞նչպէս մէկն էր Պապ։ — 38. Ի՞նչպէս մեռաւ։ — Ո՞վ էր Մեհրուժան, եւ ի՞նչ ըրաւ։ Ի՞նչպէս պատժուեցաւ։

Է. ԴԱՍ. — Վ. Ռ. Ա. Մ Շ Ա. Պ Ո Ւ Հ



Վ Ո Ա Մ Տ Ա Պ Ո Ւ Հ

39. Վուամշապուհ խելացի և ուսումնասոէր թագաւոր մըն էր, որով ինքզինք սիրցուցած էր ո՛չ միայն Հայերուն, այլ նաև Պարսիկներուն, որոնց հետ բարեկամութեամբ կապուեցաւ :

40. Վուամշապուհի ամենէն երեւելի գործն էր հայկական դպրութեան ծաւալման համար ըրած ջանքերն ու բացած դպրոցները :

Պատմած. — ՀԱՅ ԳՐԵԲՈՒԻ ԳԻՒՑԸ

Վուամշապուհի ժամանակ Հայոց կոմիտիկոսն էր Ս. Մահակ: Ասիկա իր գործակիցներէն Ս. Մեսրոպի հետ գիշեր ցործել կը մտածէր հայերէն զրեր հնարելու վրայ, քանի որ մինչեւ այն ասուն հայերէն զիր չունենալուս պատճառով յունորէն կամ ասորերէն և կամ պարավերէն զրեր կը գործածէինք: Խակ լեզուին գալով՝ թէն հայերէն լեզուն գոյութիւն ունէր, բայց զրերու բացակայութեան պատճառով մեր նախնիքներն ստիպուած էին այդ երեք լեզուներն իբրևու պաշտօնական լեզու ընդունիլ թէ՛ կրօնական արարութեամներու և թէ արտաքին յարաբերութիւններու համար:

Վերջապէս Ս. Մեսրոպ երկար ձամբորդութիւններ կատարելէ և զանազան ազգերու զրեր ուսումնասիրելէ ետք՝ հայերէն զրերն հնարեց: Սար վրայ Վուամշապուհ թագաւոր, Ս. Մահակ հայրապետ ու Ս. Մեսրոպ վարդապետ ձեռք ձեռքի տուած՝ սկսած դպրոցներ բանալ, աշակերտներ հասցնել մէկ կողմէ, և միւս կողմէ Ս. Մահակի, Ս. Մեսրոպի ու իրենց աշակերտներու ջանքերով հայերէնի թարգմանուեցաւ Աստուածաջունչը:

Հայ գրականութեան ամենէն նշանաւոր շրջանն եւ զաւ այս ժամանակը, որ կոչուեցաւ՝ Ռակեդար:

Հարցարան. — 39. Ի՞նչպէս Խաղաւոր էր Վուամշապուհ: — 40. Ի՞նչ երեւելի գործ ըրած է: = Ի՞նչ զիր եւ ի՞նչ լիզու կը գործածուէր զրերու զիւտէն առաջ: Ո՞վ հնարեց հայերէն զրերը: Որո՞նք էին զործակիցները:

ԻԱ. ԴԱՍ. — ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅՆԿՈՒՄԲ

41. Արշակունեաց հարստութեան վերջին թաւգաւորն եղաւ Վառմշապուհի որդին՝ Արտաշիր, որ Ս. Սահակի հետ միասին գերի ինկաւ Պարսիկներու ձեռք։

42. Պարսիկներու բուն նպատակն էր Հայոց թագաւորութիւնը չնջելով բոլոր Հայերը կրակապաշտ դարձնել և իրենց մէջ ձուլել։

Պատմած. — ԿՐԾՆԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔ

Հայերը կրակապաշտ դարձնելու համար Պարսից Յազկերս Բ. թագաւորը նախ Յոյներու կամ Հուսներու վրայ յորդակեցաւ, որպէս զի անսնք՝ իբրեւ քրիստոնեաց ազգ՝ չկրնան օգնել Հայերուն, ետքը՝ հայ զօրքերն ու նախարարներն իրեն օգնական աւատ, Հանաց դէմ պատերազմնելու համար, բայց պատերազմէ ետք բոլորն ալ վար զրատ, որպէս զի Հայաստանի մէջ իր նախառակին դէմ դնող ուժ մը չգանուի։ Այս միջոցին Յազկերս իր Դենչապուհ իշխանը Հայաստան զրկեց, Հայերն համոզելու և պարսկական կրօնքն ընդունել ատաւ համար. բայց երբ թագաւորն իմացաւ, որ անհարելի է համոզել Հայերը, այս անդամ իր Միհրներսեհ հազարաւութ թուղթ մը զրկեց Հայերուն, մէկ կողմէ գովելով իրենց՝ պարակական՝ կրօնքը, իսկ միւս կողմէ քննադատելով ու վար զարնելով քրիստոնէութիւնը։ Այս թղթին մէջ ըսուած էր նաեւ, որ Հայերը կամ պէտք է կէտ առ կէտ պատսախունեն եղած քննադատութեան, և կամ բոլորն ալ պէտք է պարսկական կրօնքն ընդունին։

Հայաստանի մէջ մնացած նախարարներն ու բոլոր

եալիսկոպոսները, նոյնպէս և նշանաւոր քահանաներ Ս. Յովսէփի կաթողիկոսի նախագահութեան ատկ ժողով մը գումարելով, իսամա և մերժողական պատասխան մը առաջն Միհրներսեհի, պախաբահելով անոնց հաւատքը։

Հարցարան. — 41. Ո՞վ եղաւ Արշակունեաց վերջն Խազաւորը։ — 42. Ի՞նչ էր Պարսից նպատակը։ — Ի՞նչ միջոցներով Պարսիկները կ'ուզէին կրակապաշտ ընել Հայերը։ Ի՞նչ դիրք բունեցին Հայերը։

ԻԲ. ԴԱՍ. — ՔԱՅՆ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

43. Վարդան Մամիկոնեան Ս. Սահակի թոռն էր և Հայոց սպարապետ, որ իր ազգը փրկելու համար երեսանց քրիստոնէութիւնն ուրացաւ, բայց սրատվ հայ քրիստոնեայ մնաց։

44. Վարդանի հետ ուրիշ խումբ մը նախարարներ ալ սուտ կրակապաշտ ձեւացան, իրենց մէջ երդում ընելով սակայն հաւատարիմ մնալ քրիստոնէութեան։

Պատմած. — ՎԱՐԴԱՆԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Յազկերս Հայոցմէ եկած իվաս պատսախանն իմանալով, սասափի զայրացաւ, և հրաման բրաւ հայ նախարարներն իր սաջեւ բերել։ Նախարարները Ս. Յովսէփի կաթողիկոսին խոսանալով հանսատաւն մնալ իրենց հաւատքին վրայ, ճամբայ ելան։ Պարսկաստան համերնելով, ներկայացան թագաւորին, որ բոլորն ալ սասակելով հրամայեց պարսկական կրօնքն ընդունիլ. բայց նախարար-



ՔԱԶՆ ՎԱՐԴԱՆ ՄԱՍԻԿՈՆԵԱՆ

Ներն հակառակեցան։ Ասոր վրայ Յաղկերտ ձիւաղային խորհուրդ մը յլացու։ բոլորն ալ հեռաւոր աեղեր աքսորել, եւ Հայաստանը հիմնայաստակ ընել։ Սակայն պարակացած իշխաններէ մէկն ասիկա իմանալով, անմիջապէս հայ նախարարներու քով վագեց, և խնդիրը պարզելով՝

խորհուրդ առւառ երեսանց կրակապաշտ ձեւանոր, մինչեւ որ նորէն Հայաստան երթան և զօրաւոր բանակ մը կաղմանով դէմ դնէն Պարսից։

Այսպէս ալ եղաւ :

Հայ նախարարները ձեռք ձեռքի աալով իրենց բուլոր ուժերը միացուցին, և Վարդանի նախագահութեան տակ պատերազմական ժողով մը գումարելով՝ որոշեցին մինչեւ իրենց վերջին շունչը դիմադրել Պարսից։

Տղմուտ գետին քով սկսու պատերազմը :

Վարդան քաջ սպարապետը մէկ կողմէ աջ ու ձախ կը յարձակէր, իսկ միւս կողմէ բանակը կառավարելով հրամաններ կ'արձակէր ու սասափկ ջարդ կուտար թշշնամին։ Բայց վերջապէս ինք ալ վերաւոր ինկաւ ու իր ընկերներուն հետ նահատակուեցաւ։

Ճարցարան. — 43. Ո՞վ էր Վարդան։ Խնչո՞ւ քրիստոնէութիւնն ուրացաւ։ — 44. Մինակ Վարդա՞ն ուրացաւ։ — Վարդանանց պատերազմն ի՞նչպէս կատարուեցաւ։

ԻԳ. ԴԱՍ. — ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

45. Վարդանի եղբօրորդին էր Վահան, որ աղայութեան ժամանակ Պարսիկներու ձեռք գերի ինկած էր, բայց ազատուելով Վրաստան անցած և այնտեղ մեծցած։

46. Վահան Հայաստան դալով՝ նախարարներու կողմէ Հայոց սպարապետութեան պաշտօնին կոչուեցաւ, և Պարսից դէմ վարած յաղթական պատերազմներէն ետք մարզպանութեան բարձրացաւ։



ՎԱՀԱՆ ՄԱՍԻԿՈՆԵԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատմած. — ՎԱՀԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Վահան սպարազետութեան կոչաւելէ ետք խմանալով որ Պարսիկները Հայաստանն կ'արշաւեն, Յաղնան Մանդականի կաթողիկոսը հետան աւատ՝ անհոգ դէմ պատերազմի գնաց, և աղէկ գտո մը տալավ բաղթական ետ դարձու: Պարսիկները Վահաննէն վրէժ լուծելու համար միշտ կը հետապնդէին զայն: Օր մըն ալ Վահանը ծուզակը ձգելով յարձակեցան վրան: բայց քաջ սպարապեանն իր փոքրաթիւ զօրքերով ու գիւղացիներու օգնութեամբ ո՛չ միայն դիմագրեց պարսկական զօրաւոր բանակնն, այլ և մասնացիչ շատուրերը կոսորելով, մնացած մասն ալ յրուեց վախտաց:

Այս միջոցին պարսկական դահին վրայ բարձրացաւ

Վաղարշ, որ իր և զրացի երկիրներուն միջեւ տեղի ունեցած անվերջ խուռլութիւնները դադրեցնելու համար մարդ զրկեց Վահաննին, և հաշտութիւն խոստացաւ: Վահանն հաշտութիւնն համար երեք պայման դրաւ: առաջին՝ քրիստոնէութեան դէմ եղած հալածանքը վերցնել, երկրորդ՝ մասարձան և դաւաճան մարդոց պաշտօն չտալ, և երրորդ՝ զրպարատութիւններու ականջ չկախել: Վաղարշ այս երեք պայմաններն ալ ընդունեց, և հաշտութիւնը կնքուեցաւ, որուն վրայ Վահանն՝ Հայոց մարդպան կարգուեցաւ:

Հարցարան. — 45. Ո՞վ էր Վահան: — 46. Ի՞նչ պաշտօններ ունեցաւ: — Ի՞նչ պատերազմներ ըրաւ Վահան: Ի՞նչպէս հաշտուեցաւ Պարսից հետ:

ԻԴ. ԴԱՍ. — Գ Ա Յ Լ Վ Ա Հ Ա Ն

47. Մամիկոնեան ցեղէն էր Գայլ Վահան, որ իր տարօրինակ քաջութեան պատճառով Գայլ անունն ստացաւ:

48. Գայլ Վահանի ամենէն նշանաւոր գործն եղաւ Տարօնի պաշտպանութիւնն ու Պարսիկներու տուած ջարդը, երբ ատոնք ահագին բանակով Տարօնի վրայ յարձակում կ'ընէին:

Պատմած. — ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՃԱԽԱՆՔ

Հայերն իբրեւ միակ քրիստոնեաց ազգ Արեւելքի ճամբուն վրայ, իրենց սուրբ հաւատքին համար միշտ յարձակումներու ենթակայ եղած են:



ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

Երբ Պարսիկները պահ մը դադրեցան Հայաստան արշաւելէ, նոր բայց աւելի վասթար ազգ մը մէջտեղ ելաւ, և Հայաստանը քարուքանդ ըրաւ: Այս ազգն էր՝ արաբական ազգը: Արաբներն իրենց վայրագութիւննին այնչափ յառաջ տարին, որ մինչեւ իսկ հայ նախարարներն ու միծամնծները նախիջեւանի եկողեցին լեցնելով

կրակի տուին զայն: Այսպէս՝ հաւասարի համար Արաբներն ամէն օր կը նեղէին Հայերը: Հայոց մէջէն անոնք որ հաւասարիմ կը մնային իրենց ազգին ու եկողեցին, կը խողխողուէին անիմայ, ինչպէս մեր օրերուն մէջ ալ ճիշտ մի և նոյն պատճառներով մի և նոյն բարբարոսութիւնները գործուեցան:

Հայերն արաբական արշաւանքներու գորաւոր կերպով դիմագրեցին այն ատեն միայն, երբ Բագրատունեաց հարսութիւնն հասասառեցաւ Հայաստանի մէջ:

Հարցարան. — 47. Ո՞վ էր Դայլ Վահանն եւ ինչո՞ւ «Գայլ» կոչուեցաւ: — 48. Դայլ Վահանի ամենէն նշանաւոր գործն ի՞նչ եղաւ: = Հայերն ինչո՞ւ յարձակումներու ենթար'ուեցան Արաբներէ: Որո՞նք դիմագրեցին այս յարձակումներու:

ԻԵ. ԴԱՍ. — Ա. Շ Ո Տ Ա.

49. Բագրատունեաց հարստոթեան առաջին թագաւորն եղաւ Աշոտ Ա., Սմբատ Խոստովանողի որդին:

50. Ասիկա խելացի և քաղաքադէտ մէկն ըլլալով, Հայաստանի բոլոր թշնամիներուն հետ հաշտոթիւն կնքեց, և խաղաղութեամբ կառավարեց երկիրը:

Պատմած. — Ա.ՐԾՐՈՒՆԵԱՅ Թ.Ա.ԳԱ.ԻՈՒՐՈՒԹԵԱՆ
Հ Ա Ս Ա Ս Ո Ւ Մ Հ

Աշոտ Ա. ի մեռնելէն ետք իրեն յաջորդեց իր Սլմբատ որդին:

Տ Ա Ր Ա Ր

Սմբատ Ա. փ ժամանակ Արաբները նորէն սկսան արշաւել Հայաստան։ բայց Սմբատ ամէն անգամ ալ կա՛մ յաղթութեամբ և կամ հաշտութեամբ ետ կը դարձնէր զանոնք։

Սմբատի օրով Հայոց ամենէն մեծ թշնամներն էին։ Արաբատականի Աֆշան ու Եռուսուֆ իշխանները, երկու արինկղակ եղբայրներ։

Եռուսուֆի Արաբատականի իշխան եղած ժամանակին էր, երբ օր մը Վասպուրականի Գաղիկ Արծրունի իշխանը, որ Սմբատի քեռորդին էր, չնչին բանի մը համար նեղանալով Սմբատէն՝ գնաց փախաւ Եռուսուֆի քոյլ։ Եռուսուֆ՝ որպէս զի թէ՛ Հայոց մէջ խռովութիւն ձգէ և թէ Գաղիկը բոլորավին իրեն կապէ, անոր գըլխուն թագ գնելով Վասպուրականի թագաւոր անուտանեց։ Անկէ ետք Եռուսուֆ ու Գաղիկ միացած՝ աւերակ դարձուցին Հայաստանը, մէկ կողմէ ջարդելով բնակիշները, և միւս կողմէ այլելով չէն քաղաքներն ու գիւղերը։

Գաղիկ Հայաստանի ողբալի վիճակը աենանելով խիզնը շարժեցաւ վերջապէս, և ուզեց Սմբատի հետ հաշտուիլ։ բայց Սմբատ՝ գտաւածանի մը բարեկամութիւնը մերժեց։ Ասոր վրայ Գաղիկ իր մեղքը քաւելու համար Աղթամարի հոյակապ եկեղեցին շինել տուաւ իր ծախքով։

Հարցարան. — 49. Ո՞վ եղաւ Բաղրատունեաց առաջին թագաւորը։ — 50. Ի՞նչ զործ տնաւ Աշոտ։ Ի՞նչպէս հաստատեցաւ Արծրունեաց թագաւորութիւնը։ Յետոյ ի՞նչ ըրաւ Գաղիկ։

ԻԶ. ԴԱՍ. — Ա. Շ Ո Տ Ե Բ Կ Ա Թ

51. Սմբատի որդին՝ Աշոտ Բ.՝ լոելով որ իր հայրն Եռուսուֆի հրամանով սպաննուած է, անոր վրէժը լուծելու համար Եռուսուֆի զօրքերուն վրայ յարձակեցաւ, և բոլորն ալ գուրս վաճառեց Հայաստանէ։

52. Աշոտի յաղթութիւններուն լուրը շուտով իմացան հայ նախարարները, և անմիջապէս թագաւոր պատկեցին զայն։

Պատմած. — ՆԵՐՔԻՒՆ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշոտ Բ. արտակարդ ուժի աէր մէկն էր, անոր համար ու Երիաթ կոչուեցաւ։ Բայց նախառակ իր երկաթէ բազուկներուն՝ հայ նախարարներու մէջ ծագած խռովութիւնները, իր ազգականներուն մէջ յառաջ եկած չար նախանձը, և հայկական գահին դէմ նիւթուած սոսկալի գտաւագրութիւնները ջլատեցին զինք։ Հայ մարդիկ փոխանակ իրարու հետ միանալով Արաբացիներու նման ահաւոր թշնամիի մը դէմ պատերազմներու, իրարու վրայ յարձակիլ սկսան, որուն հետեւանքն եղաւ մէկ կողմէ Եռուսուֆի նորանոր արշաւանքներն ու աւերածութիւնները, իսկ միւս կողմէ սարսափելի սալը, որ Հայաստանի պատահած ողորմելի թշուասութեան վրայ անգութ հարուած մըն ալ աւելցուց . . .

Վերջապէս Հռոմեաներն օգնութեան հասան Աշոտի։ բայց ուշ էր արդէն։ վասն զի Աշոտի հօրեղբօրորդին՝ գտաւածանն Աշոտ՝ Գաղիկ Արծրունիէն օրինակ տանելով



ԱՇՈՏ ԵՐԿԱՔ

միացաւ Եռևառքին հետ, և անդիք Հայոց թագաւոր անուանուելավ մտաւ Հայոստան։ Երկու բանակներու միշտեւ արիւննեղութիւնն սկսաւ, որ՝ հակառակ Յովհան կաթողիկոսի միջամտութիւններուն ու ձեռք բերած հաշտութեանն, տարիններ աեւեց, գժբախտաբար։ Հայոստանի ներքին խռովութիւններն՝ արտաքին ո՛ւ և է

Թշնամիի յարձակումներէն առելի՛ վեաստկար եղան աղջին։ ահա ա՛յս է որ մեր տունը քանդեց . . .

Ճարցարան. — 51. Ո՞վ եռւսուփի զօրքերը վանտէց Հայաստանէ։ — 52. Ի՞նչպէս թագաւոր պատկուեցաւ։ — Հայաստանի ներքին խռովութիւններն ի՞նչ էին. ի՞նչ գաւահանութիւններ կատարուեցան։


Ի. ԴԱՍ. — Ա. ՇՈՏ ԱՂԱՐՄԱԾ

53. Աշոտ Գ. շինարար, աղքատասէր. բարեպաշտ և բարեգործ թագաւոր մը ըլլալով՝ Ողորմած մակդիրն ստացաւ։

54. Աշոտ Գ.ի օրով իր Մուշեղ եղբայրը փառասիրութենէ մղուած՝ կարսի մէջ ինքզինքը թագաւոր հոչակեց, որով հայկական նոր թագաւորութիւն մըն ալ առեցաւ և կոչուեցաւ կարուց բագաւորութիւն։

Պատմած. — ԱՆԻ ԳԱՂԱՔ

Հայոստանի ամենէն չքեղ քաղաքներէն մէկը, թերեւս առաջնն իսկ եղած է Անի, իր հոյակապ պալատներով ու բաղմաթիւ տաճարներով, կը կնակի պարիսպներով ու բարձր աշտարակներով։ Անի՝ թէեւ շատ դարեր առաջ հիմնուած, բայց մայրաքաղաքի վերածուած է Աշոտ Ողորմածի օրով։ Այս թագաւորը նորմանոր չէնքերով ու պարիսպներով ճախացուցած է զան։ իսկ իր Սմբատ Բ. ու Գագիկ Ա. որդիններն և յաջորդները զանազան շինութիւններով ու մանաւանդ նշանաւոր Մայր



ԱՆԻ ՔԱՂԱՔ

Եկեղեցիի հիմնարկութեամբ գեղեցկութեան դադախնաւկէն հասուցած են քաղաքը։ Այսօր Անիի թէ պարբազներուն և թէ տաճարներուն վրայ գեռ կը կարգացուին իր փառաւոր անցեալը վկայող բազմոթիւ արձանագրութիւններ։

Կիսակործան սպարիսպներ, տւերակ եկեղեցիներ, խորտուբերա ճամբաններ, բնակարաններու ու ծիթահանքերու հետքեր, քաղաքին քովին ողբարով անցնող Ախուրեան գետին վրայ ձգուած բայց հիմա փլած երկյարկմանի կամուրջ մը, ու ամայութիւնն, ախուր սահայութիւն։ Այն հաղարումէկ եկեղեցիներէն, որոնց անունով ժամանակին երգուած կ'ընէին աեղացիք ու դրացիք, հաղիւ մնայած են մէկ քանին։

Հարցարան. — 53. Ինչո՞ւ «Ողորմած» կոչուեցաւ Աշոտ Գ։ — 54. Ի՞նչ է կարուց թագաւորութիւնը։ = Ի՞նչպէս տեղ է Անի։

Ի. ԴԱՍ. — ՅՈՎՀԱՆՆԻՍ ԱՄԲԱՏ

55. Յովհաննէս Սմբատ թագաւորական դահը բարձրանալուն, իր Աշոտ եղբայրը՝ չար նախանձէ դրդուած՝ մի քանի անգամներ յարձակեցաւ Անիի վրայ, և երկրին մէկ մասը ձեռք անցընելո՛վ միայն կարելի եղաւ հաշտութիւն մը գոյանալ երկուքին միջեւ։

56. Այս միջոցին Յունաց (Հոռոմներու) զօրքերն Ափխազներու դէմ մղուած պատերազմէ վերադառնալով՝ Հայաստանի վրայ կուգային Սմբատ պատերազմէ վախնալուն՝ անմիջապէս նամակ մը զրկեց Յոյներուն և խոստացաւ իր մեռնելէ ետք անոնց առաջ Անին։

Պատմած. — Վերջ ԱրծրուինեաՅ ԹԱԳԱՒԻՈՐՈՒԹԵԱՆ

Մինչդեռ Սմբատ իր թոյլ ու վախկոս բնաւորութեամբ Անին և ամբողջ Հայաստաննը Յոյներու յանձնելու խօսք կուտար, անդին՝ Վասպուրականի մէջ՝ արդէն եղած վերջացած դէպք մը կը յուղէր ժողովուրդը։ — Արծրունեաց Անիներիմ թագաւորը ասսամիկ նեղուելով Թաթարներու արշաւանքներէն, իր որդիներէն մին Յունաց Վասիլ Կալորին զրկեց, ինդրելով որ գայ իր երկիրը գրաւէ, և իր ու իր մարդոց բնակութեան համար ող Սեբաստիա քաղաքը՝ շրջակայ գլուղերով՝ իրեն տայ։ Կայսրը չատ ուրախացաւ այս առաջարկութիւնէն, և անմիջապէս կատարեց Անիներիմի փափաքը։ Այսպէս վերջ գտաւ Վասպուրականի Արծրունեաց թագաւորութիւնը։

Թաթարներու Հայաստանի մէջ գործած խժդութիւններն անկարելի է զրչով նկարագրել . հուր ու սուր , դիմուներու կոյտեր ու մըսացող աւերակներ . ասո՞նք են եղած իրենց բոլոր քաջադործութիւնները . իրենց սաք կոխած աեղը՝ խոտերն անգամ չորսած են . . .

Թաթարական այս արշաւոնքներու ժամանակ Պարսկիներն ալ գործի վրայ գանուած են : Վասպուրականի Բերկրի քաղաքին պարսիկ քաղաքապետը մարդուչափ խորութեամբ փռա մը փորել տաղալ՝ հայ ու յոյն գերիներու արիւնով լիցնել առւած , ինք ալ մէջը մանելով լուսցուած է . . .

Հարցարան. — 55. Սմբատի ու Աշոտի միջեւ ի՞նչ պատահեցաւ : — 56. Ի՞նչ պախարակելի խոստում ըրաւ Սմբատ : — Արծունեաց Թագաւորութիւնն ի՞նչպէս վիրջ զտաւ : Թաթարներն ու Պարսկիներն ինչի՞ր ըրին Հայաստանի մէջ :

Ի թ. ԴԱՍ. — Գ Ա Գ Ի Կ Բ.

57. Գագիկ թ. գժուար պարագաներու աակ թագաւոր օծուեցաւ . վասն զի մէկ կողմէ Յոյները կը յարձակէին Անիի վրայ , իսկ միւս կողմէ Վեսոյ Սարգիս Խլսանը գաւադրութիւններ կ'ընէր գահին դէմ :

58. Յոյները չկրնալով յաղթանակը տանիլ , Հայերու հետ բարեկամութիւն կեղծեցին և կ. Պոլս հրաւիրեցին Գագիկը , որ եղած հրաւէրին անկեղծութեան վրայ գժուարութեամբ հաւատալով հանգերձ գնաց , բայց մէյ մըն ալ Անիի երեսը չաեսաւ :



ԱՆԻԻ ՊԱՇՏՈԱՆՈՒՄԸ

Պատմած . — ԱՆԻ ՅՈՅՆԵՐՈՒԻՆ ԿԲ ՅԱՆՉՆՈՒԻ

Թուլամորթ Յովհաննէս Սմբատի խոստումը չէին մասցած Յոյները . և երբ Սմբատի մահուան լուրն սովոն , Միքայէլ կայսրն անսիջապէս մարդ զրկեց Հայաստան , պահանջելով Անի քաղաքը : Հայերը բնականաբար մերժեցին կատարել վախկոս թագաւորի մը կողմէ տրուած այդ անսակ խոստում մը , և Անիի առջեւ բոււն կերպավ կաւեցան յունական զօրքերու դէմ , որոնց վէրքերէն հասած արիւնը կարմիր ներիկց Ախուրեան գետը : Այս պատերազմի ժամանակ մնէ քաջութիւն ցոյց տուաւ Վահրամ Պահլաւոնի սպարապետը , որ դաւաճան Վեստ

Սարգսի լարած բողոք մեքենայութիւններն ոչնչացնելու համար նախարարներն ու Պետրոս կաթողիկոսը հրաժարելով՝ Գագիկ Բ. ը. թագաւոր օճել տուաւ։ Վեստ Սարգսի թէեւ պահ մը հասղանդեցաւ թագաւորին, բայց գաղանի կերպով յարակերութեան մտաւ Յոյներու հետ, և խորհուրդ տուաւ անսնց գալ դրաւել Անին։ Յոյները մեծ բանակով եկան մտան Հայաստան։ բայց Գագիկ տահագին կոստրած ասպար անսնց, բողոքն ալ ցրուեց փախուց։ Ասոր վրայ Յոյները բողորովին յուսահատ՝ Վեստ Սարգսի օգնութեամբ Հայերու հետ բարեկամութիւն կեղծեցին, և իրենց նոր կայսրը՝ Կոստանդին Մոնոմաքոս՝ նոմակ գրեց Գագիկի, հրաւիրելով Կ. Պոլս։ Գագիկ անմիջապէս հասկըցաւ կեղծիքը, և մերժեց երթալ։ բայց Վեստ Սարգսի ու իր հետեւազներն Հայոց կաթողիկոսին հետ միացած համոզեցին Գագիկը, հակառակ Վահրամ Պահաւունիի բարի և զգուշացուցիչ իրասմներուն։ Վերջապէս Գագիկ գնաց Կ. Պոլս։ բայց այն երթան էր. մէջ մըն ալ ետ չգործաւ։ Իսկ Յոյները՝ Վեստ Սարգսի ու Պետրոս կաթողիկոսի դաւադրութիւններով եկան գրաւեցին Անին, որով վերջ գտաւ Բագրատունաց հարատութիւնը։

Հարցարան. — 57. Գագիկ Բ. ի՞՞նչ պարագաներու տակ թագաւոր օծուեցաւ. — 58. Գագիկ ի՞՞նչպէս գերի մնաց Յոյներու ձեռք։ Յոյներն ի՞՞նչպէս գրաւեցին Անի բաղաքը։

Լ. ԴԱՍ. — ԳԱԳԻԿ Բ.Ի ԳԵՐՈՒԹԵԱՆ ԱՏԵՆՆԵՐԻ

59. Գագիկ Յոյներու ձեռք անցնելէ ետք Հայաստանի վիճակը շատ տխուր եղաւ։ Այս անգամ Պարսիկները կամ Պարսկաստանի ճամբով եկած ԱԷլճուքեաններն էին, որ Հայաստանի չեն մնացած քաղաքներն ու գիւղերը մոխրի կը վերածեին։

60. Պարսիկներու, այսինքն՝ ԱԷլճուքեաններու Տուղրիլ ու Ալիսասըն արիւնարբութագաւորները թիղ մը հող չձգեցին Հայաստանի մէջ տուանց արիւնով ներկելու։

Պատմած. — ՊԱՐՍԿԱԿԱՆ (ԱԷԼՃՈՒՔԵԱՆ) Ա.ՐՃԱՒ.Ի.Ա.Բ.ԵՐ

Անգամ մը որ Հայաստան տուանց թագաւորի մնաց, և հաւասարիմ իշխաններն ու նախարարները մէջ մէկ կողմ փախած ասպասառնած էին, գարանակալ թշնամիներն սկսան ալսած համարձակ յարձակիլ Հայաստանի վրայ։ Այս թշնամիներէն զլիսաւորն էր Պարսից Տուղրիլ թագաւորը, որուն զօրքերը վեց եօթն տարի շարունակ ասպասակեցին Հայաստանը, և իրենց քալած տեղերը մոխրի գարձուցին ամայացուցին։ Տուղրիլ այս եղածներէն չբաւականանալով՝ ինք ալ մասնակցեցաւ կասորածներու ու աւերտներու, և եկաւ պաշարեց Մանագկերս քաղաքը, բայց չկրցաւ գրաւել։ ուստի ետ գառնալով իր վրէմն առաւ Արձեկի բնակիհներէն։

Տուղրիլի մեանելէն ետք իր Ալիսասըն եղրորդովին գահ բարձրացաւ։ Ասիկա Տուղրիլէն աւելի անգութ և

աւելի բարբարոս մարդ մէն էր, որուն առաջին գործն եղաւ Սնին զրաւել ու բնակիչները ջարդել. և երբ կը պատրաստուէր Կարսի Գագիկ թագաւորին վրայ ալ քաւել, Գագիկ վարպետութիւնով մը ազտակցաւ այս փորձանքէն, և գնաց հաստատուեցաւ Փոքր Հայոց Ծամինդաւ բերդին մէջ, որ Յոյներու կը պատկանէր. ինք ալ փոխարքէն Կարսը տուու անոնց: Այսպէսով վերջ գտաւ Կարսաց թագաւորութիւնը: Անկէ ետք Հայոստանի վրայ նորէն արշաւեցին Թաղթարները, և Յուղրիլի նման գաղաններու ձեռքերէն ազտառուած մասերը քարուքանդ ըրին:

Հարցարան. — 59. Ի՞նչ եղաւ Հայաստանի վիճակը, երբ Գագիկ գերութեան մէջ էր: — 60. Որո՞նք էին զիաւոր թշնամիներն եւ ի՞նչ ըրին: — Տուղրիլ ու Ալիսալան ի՞նչ չարիքներ հասուցին Հայաստանի: Ի՞նչ եղաւ Կարսոց թագաւորութիւնը:

ԼԱ. ԴԱՍ. — ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

61. Հայաստանի վրայ գիշատիչ գաղաններու նման արշաւող ու չեն քաղաքներն աւերելով բնակիչները կրակի ու սուրի մասնող բարբարուներու ձեռքէն ազտառելու համար՝ Հայաստանի ժուղվուրդը դաղթականութեան դիմեց, ինչ որ ըրաւ մեր օրերուն, կրկնուած խմդժութիւններէ ահաբեկ:

62. Այս միջոցներուն՝ Ռուբէն անոնով իշխան մը Կիլիկիա դաղթած Հայերն ապստամբութեան մկելով հայկական ազատ կառավարութիւն մը հաստատեց, որ եղաւ Ռուբինեանց հարստութեան հիմը:



ՌՈՒԲԻՆ ԻՇԽԱՆ


Պատմած. — ՌՈՒԲԻՆԻ ԱՊԱՏԱՄԲՈՒԹԻՒՆ.

Պարսկական, արաբական ու թաղթարական արշաւանքներէ զատ՝ Հայաստան շատ նեղուեցաւ նաև յունական արշաւանքներէ:

Յոյները մտնմետականներու նման կը բանադատէին
22 — Տարր. Ազգ. Պատ Ի.

Հայերն իրենց գաւառնամքը փոխել և յունակաւան ըլլալ, որպէս զի կարելի ըլլաց Հայոց բոլոր երկիրները դիւրութեամբ գրաւել: Այս պատճառով Հայերու և Յոյներու միջև մեծ տակութիւն կար, և Յոյներն Անին ձեռք անցնելէ հատք ո՛չ միայն Գաղփիկ Բ և աքսորեցին, այլ և վաստարա սպաննեցին զայն: Արդ՝ Գաղփիկի ազգականներն մէկը, Ռուբէն, որ Գաղփիկի հետ կը բնակէր, այս դէպքին վրայ սասափի զայրացած՝ անցաւ Կիլիկիա, ուր ապաստանած Հայերն համոզելով զինուած խումբեր պատրաստեց, և Տաւրա լեռները բարձրանալով Յոյներու դէմ ապաստամբեցաւ: (Կիլիկիա այն տաեն Յոյներու կը պատականէր): Յոյները չկընալով դէմ գնմէլ Ռուբէնի խումբին, կամաց կամաց քաշուեցան: իսկ Հայերը Ռուբէնի առաջնորդութեամբ նոր և աղաս կառավարութիւն մը հաստատեցին հոն, իրենց հնազմուղեցնելով՝ տեղացի բընակիչները: Այսպէսով Հայաստանի համար ցնծութեան նոր դարսողներն մըն ալ բացւեցաւ, և հիմնուեցաւ Ռուբէնեանց հարատորիւնը:

Հարցարան.— 61. Հայաստանի ժողովուրդն ի՞նչ ըրաւ երը սաստիկ նեղուեցաւ համաժանքներէ:— 62. Ո՞վ նիմնեց Ռուբէնեանց հարատորիւնը:— Հայերու եւ Յոյներու յարաբերութիւններն ի՞նչպէս էին: Ի՞նչպէս ապստամբեցաւ Ռուբէն:



Լ. ԴԱՍ. — ԿՈՍՏԱՆԴԻԻՆ ԻՇԽԱՆ

63. Ռուբէնի մեռնելէն եռք Հայոց իշխանութեան զէկը ձեռք առաւ իր որդին՝ կոստանդին, որ Յոյներու ձեռքէն շատ տեղեր գրաւելով ընդարձակեց Հայկական երկիրը:

64. Կոստանդինի իշխանութեան ժամանակ Եւրոպայէ Կիլիկիա մտաւ Խաչակիրներու առաջին խումբը, որուն նիւթական ու բարոյական օգնութիւններ ըրին Հայերը:

Պատմած. — Խ Ա. Զ Ա. Կ Ի Բ Ն Ե Բ Բ Է

Կոստանդինի իշխանի ժամանակ Երուսաղէմ՝ հիմակուսն պէս՝ մահմետականներու ձեռք կը գանուէր, ուրներ հոն զացող ուխտաւորները կը նեղէն: Եւրոպայի քրիստոնեաններն Երուսաղէմ կատարուած բանութիւններու վերջ մը դնելու համար մտանաւոր բանակ մը կազմեցին, և մտան Կիլիկիա: Այս բանակը կաչուեցաւ՝ Խաչակիրնեցու բանակ, որուն վրայ ուրիշներ ալ եկան աւելցան ետքէն:

Խաչակիրներն երբ Կիլիկիա մտան, արգէն յոզնած և իրենց պաշարն սպառած էր, այնպէս որ ուտելիքի կողմէ շատ կը նեղուէին: Այս լուրն համնելով Հայերու ականջը, սկսան ամէն կողմէ ուտելիք հաւաքել և դրկել անոնց: Ասկէ զատ՝ Կոստանդինի զօրքերով զնաց միացաւ Խաչակիրներու բանակին, և Անտիոքի պաշարման ժամանակ օգնեց անոնց: Ասոր վրայ Հայերն ու Յունակները սրտանց կապուեցան իրարու, և ինսամութիւններ հաստատեցին իրենց միջև: Ասիկո Հայոց առաջին քայլն եղաւ եւրոպական կեանքի մէջ մտնելու, թէև հոն ժամանակ-

ներէ ի վեր Հայկեն յաղաբերութեան մէջ էին Հռոմայիւցիներու և Բիւզանդացիներու հետ :

Հարցարան. — 63. Ո՞վ յաջորդեց Ռուբէնի, եւ ի՞նչ ըրաւ : — 64. Ի՞նչ կարեւոր դէպք պատահեցաւ Կոստանդնի ժամանակ : — Որո՞նք էին Խաչակիրները, եւ ի՞նչ էր իրենց նպատակը : Այս մասին ի՞նչ գեր կատարեցին Հայերը :

ԼԳ. ԴԱՍ. — ԼԵՒՈՆ Ա. ԹԱԳԱՒՈՐ

65. Ռուբէնէ սկսած մինչեւ Կիլիկիայի մէջ Հայկական նոր թագաւորութեան մը հաստատուիւլը՝ մի քանի իշխաններ իրարու յաջորդեցին, երբեմն յաղթելով և երբեմն յաղթուելով :

66. Բայց վերջապէս Լեւոն Բ. իշխանն իր ցոյց առած քաջութիւններուն ու իշխացիութեան չորհիւ Կիլիկիայի Հայոց թագաւոր պատկուեցաւ :

Պատմած. — ԼԵՒՈՆ Ա. Ի. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Լեւոն Բ. իշխան՝ կոռավարութեան գլուխ անցնելուն՝ իր քաջութեան ասպազոցները առաւա Խկրիմի ու Բերիացի սուլթաններուն դէմ պատերազմելով և անոնց յաղթելով :

Լեւոնի ամուռնն Եւրոպայի մէջ ալ տարածուեցաւ, երբ Եղիպատոփ Սալահատաբին սուլթանն Երուսաղէմը քրիստոնեաներու ձեռքէն տանելով կը նեղէր, և որուն համար Եւրոպայէ Խաչակիրներու նոր խումբ մը գալով՝ Լեւոնի օգնութեան կը դիմէր : Լեւոն ամէն կերպով օգնեց այս նոր Խաչակիրներու, և արժանացաւ թագաւորական տիտղոսի ու թագի : Թագաւորութեան հան-



ԼԵՒՈՆ Ա. ԹԱԳԱՒՈՐ

գէսը կատարուեցաւ այն սաւենուան մայրաքաղաք Տարանի Ս. Սոփիա կոչուած մայր եկեղեցին մէջ . յետոյ Լեւոն թագաւորական աթուր փախագրեց Սիս, և ակսաւ իր անունով հայերէն դրամ կոփել :

Լեւոնի ամենէն նշանաւոր գործն եղաւ Բերիայի սուլթանին դէմ տարած նոր յաղթանակն ու անոր վրաց դրած առուրքը : Սուլթանը Զատկի շաբթու մը Կիլիկիայի առնմանները գալով Լեւոնին մարդ զրկեց, սպասնալով ուրախութիւնը արտամութեան փոխել, եթէ Լեւոն իրեն չնազանդի եւ առուրք չտայ : Լեւոն՝ առանց այլայլելու՝

այնպէ՛ս մը յարձակեցաւ անոր բանակին վրայ, որ սուլ-թանն ու զօրքերը յանկարծակիի բերաւ. անոնց մէկ մասը փախուց, մէկ մասն ալ գերի բանեց. և՝ որպէս զի սուլթանը պատժէ՝ ծանր տուրք մը դրաւ անոր վրայ:

Հարցարան. — 65. Ռուբէնէ մինչեւ Հայոց նոր Խազաւորութեան հաստատուին ի՞նչ ըրին մէր իշխանները: — 66. Ո՞վ եղաւ Խազաւոր: — էեւոն ի՞նչպէս արժանի եղաւ Խազաւորութեան: Ի՞նչ է իր ամենէն նշանաւոր զործը:

ԼՂ. ԴԱՍ. — ԶԱՊԷԼ ԹԱԳՈՒՅՆԻ

67. Որովհետեւ Լեւոն մանչ դաւակ չունէր, մեռնելն եաք իշխանութիւնն անցաւ իր աղջկան՝ Զապէլի:

68. Զապէլ Անափոքի Ֆիլիպ իշխանազնին հետ ամուսնալով՝ միասին թագաւորեց. բայց Ֆիլիպ Հայոց զգացումները վիրաւորող լինեցք մը բըռնելուն՝ հայ պալատականներէ բանարկուեցաւ:

Պատմած. — ՀԵ ԹԻ ՄԱՐ Ա.

Ֆիլիպի մեռնելնեաք Զապէլն ամուսնացուցին Հեթում իշխանի հետ, որ Հայոց թագաւոր պսակուեցաւ: Հեթում շատ ճարապիկ և քաղաքագէտ մէկն ըլլալուն՝ երկար ժամանակ կասավարեց երկիրը:

Հեթումի թագաւորութեան ժամանակ Մեծ Հայոց մէջ մեր աղջայիններն հալոծանաքի ենթարկուեցան Թաթարներէ. այս պատճառապէ Հայերն սախառուեցան նորէն իրմաց առանի ու տեղը ձգել և գաղթել Կիլիկիա: Թա-



ԶԱՊԷԼ ԵՒ ՀԵԹՈՒՄ

Թաթարներն իրենց արշաւանքներուն դէմ դնող ուժ մը չաեսնելով՝ եկան հասան մինչեւ Կիլիկիայի սահմանները. բայց Հեթումի իր խելացի լինեցք թաթար զօրավարին հետ բարեկամացաւ, և անոնց արշաւանքը կասեցուց, երկիրը փրկելով վերահաս վասանգէ մը: Յեսայ թաթար ինքնակալին այցելութիւն առլով՝ մեծ պատիւներով լին-

դունուեցաւ և անոր հետ մշտական խաղաղութեան ու զինակցութեան գաշինք հասառատեց :

Այսպիսի գործերով Հեթում սիրելի եղաւ իրեններուն, և ծերութեան հասակին մէջ վաճաք մը քաշուելով իբրեւ ձգնաւոր ապրեցաւ :

Հարցարան. — 67. Լեւոնէ ետք որի՞ անցաւ իշխանութիւնը : — 68. Որի՞ հետ թագաւորեց: = Ֆիլիպէ ետք ո՞վ թագաւորեց: Այն ժամանակ ի՞նչ կ'անցնէր Մհծ Հայոց մէջ: Հեթում ի՞նչ ընթացը բռնեց :

ԼԵ. ԴԱՍ. — Լ. Ե Խ Ո Ւ Գ.

69. Լեւոն Գ.՝ մեր թորոս թագաւորին որդին էր, որ յաջորդեց Կոստանդին Ա.ի :

70. Ասոր ժամանակ մաս մը Հայեր՝ Եւրոպայէ օդնութիւն սատանալու յուսով՝ ազգովին կաթոլիկութեան յարելու սրչում տալին :

Պատմած. — ԿՐՈՆԱԿԱՆ ՎԵճ

Լեւոն Ա. թագաւորին արդէն իր չափազանց լատինամութեան սպառածաւալ կը քննագաւառուէր Հայոց գիտակից դասէն: Իր յաջորդները գալունի կամ յայտնի յարաբերութիւններ սկսան մշտիկ Հաւոմի հետ, անդադար կերպով Հայուսանն արշաւող ոչ-քրիստոնեաց տարրերու դէմ օգնութիւն սպասելով անկէ, որ սակայն շատ սուզի նսաւած մեզի, այնպէս որ սպառական անխորդ մեքենայութիւններու հետեւանքով վրայ տուինք թէ՛ հազարաւոր գոհեր և թէ մեր վերջին սպասէնը՝ Կիլիկիան... Լեւոն Գ.ի ժամանակուան Հայոց կաթողիկոսն Հոռո


մի հետ միանալու համար ծրագիր մը պատրաստած էր, զոր կ'ուզէր գործադրութեան գնել. բայց իր մահը վրայ համական չլրցաւ իրազործելու: Լեւոն ժողով մը գումարելով Սիսի մէջ, այս ծրագիրը ներկայացաւց եկեղեցականներուն, ասիակելով նոյնութեամբ ընդունիլ զայն: Ժողովի ցրուելէն եաք երբ ծրագիրն ընդունող եկեղեցականներն սկսան անոր գործադրութեան, ժողովարդը բուռն կերպով ընդդիմացաւ և գործադրութիւնը խափանեց. բայց մայրաքաղաքին մէջ նոյն բանն լնելու տնօրի գտնուեցաւ, ուստի՝ ճարանատ՝ վաստաթեան զիմոց, թշնամին մասնելով իր թագաւորն ու կուսակից իշխանները, որոնք անգիրէն սպաննուեցան Պիլարու թաֆտար զօրապետին կողմէ:

Հարցարան. — 69. Ո՞վ էր Լեւոն Գ. — 70. Ասոր ժամանակ ի՞նչ որոշում տուին Հայերը: = Հայերն ի՞նչ կ'սպասէին Հռոմէ, եւ ի՞նչ երաւ ասոր վախճանն: Լեւոն Գ.ի ժամանակ ի՞նչ պափարակելի միշոցի զիմացին Հայերը, եւ ի՞նչո՞ւ:

ԼԶ. ԴԱՍ. — Լ. Ե Խ Ո Ւ Գ.

71. Լեւոն Գ. աղայ հասակին մէջ յաջորդելով իր հօր՝ Օշին թագաւորի, ո՛չ միայն թոյլ թագաւոր մը եղաւ, այլ և կրօնական նոր վէճելու դուռ բայցաւ :

72. Երիտասարդութիւնը՝ սասակի զայրացած թագաւորին դէմ, որ երկրին շահերը պաշտպանելու աեղ կրօնական ինդիքներով կը զբաղէր, իր մէջէն պատերազմիկ խումբեր կազմելով թըշնամիին վրայ յարձակեցաւ և վոնտեց Կիլիկիայէ:



ԵՒՐՈ Դ. ԻԲՐԵՒ ԴԱՍԱԽՈՐ

Պատմած .— ԼՈՒՍԻՆԵՍՈՆԵԲՐԻ

Լուսինեան տոհմը Խաչակրաներու հետ Եւրոպայէ Ա-
րեւելք մանող ազնուական գերդաստան մին էր, որ Ե-
րոսաղէմի ու Կիպրոսի գաներուն թագաւորներ տուաւ :

Յա տոհմէն Գուխանն իշխանը, որ Կիպրոսի Հանրի Բ.
թագաւորին եղբօրորդին էր, մօր Կողմէ Հայ ըլլալուն և
մանաւանդ մեր Լեւոն Բ. թագաւորին ալ թուը՝ Լեւոն
Դ. ի մեսնելէն եաք «Կոստանդին Բ.» անունով Հայոց
թագաւոր պատկւեցաւ : Այսպէսով Լուսինեաններու
ձեռք անցաւ հայկական գանձ, որ ասկայն անվերջ կուի
պատճառ դարձաւ լուսինեան կաթոլիկներու և հակալու-
սինեան ազգայնականներու միջև, որուն հետեւանքը շատ
դան եղաւ մեզ համար :

Գուխանն-Կոստանդինէ զաս հայկական գտնին վրայ
նասով լուսինեան երկրորդ և վերջին թագաւորն եղաւ-
լեւոն է . Հայոց վերջին թագաւորը :


Այս երկու թագաւորներն ոլ՝ իրեւ մոլեսանդ կա-
թոլիկներ՝ Հայոց ազգային ու կրօնական զգացաւմներուն
հակասակ լնթացքի մը հետեւելնուն պատճառով ատելի
եղան ազգին : Անոնց գէմ տակելութեան ու ոխակալու-
թեան ասաբճանն ա՛յնքան բարձրացաւ, որ հայ իշխան-
ները Գուխանն սպաննեցին, իսկ Լեւոնը՝ թշնամին յանձ-
նեցին :

Ճարցարան .— 71. Բօվ եւ ինչպէս մէկն էր Լ.ւոն Դ:— 72.
Ի՞նչ ըրաւ երիւասարդութիւնն:— Բօւսկից ելան Լուսինեանները:
Ի՞նչպէս բարձրացան հայկական գանձն, եւ ի՞նչ ընթացք բռնեցին:
Ի՞նչ եղաւ անոնց վախճանը:

Ե. ԴԱՍ. — ԿՈՍՏԱՆԴԻՆ ԳԻՆ Գ.

73. Գուիսոն-Կոստանդինի սպաննումէն ետք ազգայնականները միանալով խակական հայ իշխան մը բերին, և «Կոստանդին Գ.» անունով թագաւոր նստեցուցին :

74. Նոր թագաւորն հայ ժողովրդին սիրցնելով ինքովները, շատ խոհեմութիւնով և երկար ժամանակ կառավարեց Երկիրը :



ՍԻՍ

Պատմած. — Կիլիկիո. ՄԱՀԱՄԵՐՁ

Կոստանդին Գ-ի վերջին տարիներուն, հակառակ որ Երկար ժամանակներէ ի վեր խաղաղութիւնը հաստատ-

ուած էր երկրին մէջ, մածամնծ դժբախտութիւններուն հանդիսավայր գարձաւ Կիլիկիա : Վասն զի ո՛չ միայն կաթոլիկ տարրն սկսած էր նորէն դօրանալ և կրօնական տատկութեան սերմը ցանել թէ՛ հասարակ ժողովրդին եւթէ իշխաններուն մէջ, այլ և արտաքին թշնամիններն ալ սկսած էին ամէն կողմէ յարձակիլ Կիլիկիայի վրայ և գըրաւել մի քանի կարեւոր քաղաքներ ու բերդեր : Երկրին ներսերը թիւբքմէններէ զրաւուած էին . իսկ հարաւային մոսն ու ծավեղերքի հայկական տարրութիւններն ամբողջվին անցած էին Եղիպատայցներու ձեռք, բայցաւութիւն կողմնալով Կոսիկոս, որ սակայն առանձնացած՝ յուսահատական դիմադրութիւններու մասնուած էր : Կոստանդին իր բոլոր ուժը առւած էր մազրաքաղաքին պաշտպանութեան, — թէւ անցածալ, — և կապանի ու Բարձրքերդի տէրերուն հրամայած էր արթուն կենալ և արգիլել թշնամին մօտենալը, քանի որ չէր կրնար՝ ճամբաններու բըռնուած լլլալուն պատճառով՝ օգնութեան համնիլ Կոսիկոսի պաշտպանութեան : Ծովեկերքի հետ բոլորովին կըտրած էին յարաբերութիւնները :

Ահա այս վիճակին հասած էր Հայոց վերջին ապաստանը :

Հարցարան. — 73. Գուիտոնէ ետք ո՞վ թագաւոր նստաւ: — 74. Ի՞նչպէս մարդ էր Կոստանդին Գ: = Ի՞նչ վիճակի հասած էր Կիլիկիա :

ԱՅ. ԴԱՍ. — ԼԵԿՈՆ Ե.

75. Լեւոն Ե., որ Հայոց վերջին թաղաւորն եղաւ, Գուխտոն-կոստանդնի եղբօրորդին էր և անոր պէս հայատեաց կաթոլիկ մը :

76. Այս պատճառով երկրին խաղաղութիւնը նորէն վրդովուեցաւ, և ազգայնական ու կաթոլիկ կուսակցութիւններու պատկանող Հայերն իրար ուտել ոկտան:

Պատմած. — ՎԵՐՋ ՀԱՅՈՅ ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ

Հայերն իրենց յոյսը փոխանակ իրենց բազուկներուն վրայ դնելու, Եւրոպայէ կ'սպասէին ամէն բան, ուստի՝ անդադար և անօգուտ թղթակցութիւններով կ'օրօրուէին :

Մահմատական բանականները խիստ կերպով հակառակ էին այս տեսակ դիմումներու, որպէս զի քրիստոնեայ սկսութիւններէ օգնութիւն չստանային Հայերը, և դիւրին ըլլար զանոնք բալորովին նուածել ու մահմատական գործներէ: Այս պատճառով՝ քանի՛ Հայերն Եւրոպայի կը դիմէին, ա՛յնքան ալ կը հաղածուէին նոյն բըսնակալներէն: Այս պարագաներու տակ՝ Հայերն երբ մէկ կողմէ արտաքին թշնամիններէ կը նեղուէին, միւս կողմէ՝ ներքին թշնամիններն հանգիստ չէին տար իշխաններու, որպէս զի ժամանակ գանէին համերաշխութեան գալ և միասին գիմարել մայրաքաղաքին դռները հասած թշնամի բանակին:

Կրօնական սին վէճերն ու մալեռանդութիւնն ա՛յն սասինան թուլցուցած և միանգամայն կուրցուցած էին Հայերը, որ կաթոլիկ թագաւորի մը իշխանութենէն ու-



ԼԵԿՈՆ Ե.


գաստուելու համար նախամեծար համարեցին Եգիպտոսի սուլթանին տիրապետութեան տակ մանել. ուստի՝ վատապար իրենց թագաւորն օտարի ձեռք մասնեցին: Ասով վերջացաւ Հայոց թագաւորութիւնը:

Հարցարան. — 75. Հայոց վերջին թագաւորն ո՞վ էր, եւ ի՞նչպէս մարդ էր: — 76. Ի՞նչ ըրին կուսակցութիւնները: = Ի՞նչպէս վերջացաւ Հայոց թագաւորութիւնը:

ԼՅ. ԴԱՍ. — ՀԱՅՈՑ ԿՐԱՆ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԸ

77. Մինչդեռ կիլիկիա էր վերջին թագաւորին գերսութեան ականատես կ'ըլլար, անդին՝ Մեծ Հայոց մէջ թալթարական սուրին ու հուրին կը մատնուէին Հայերը:

78. Ասոր համար պէտք է անէծքով յիշել Զարսազանի ու Լէնկիթիմուրի նման դազանները, որոնք ամբողջ Հայաստանն արիւնով ներկեցին:



ՀԱՅՈՑ ԳԱՂԹԸ

Պատմած. — ՀԱՅՈՑ ԳԱՂԹԸ

Հայաստանի գլխուն եկած սարսափներու հետեւանքով՝ ժողովուրդն սկսու խումբերով գաղթել օսոր եր-

կիրճներ։ Այս գաղթականութիւններէն ամենէն նշանաւորը՝ Անիի գաղթականութիւնն է, որ մինչև Լեռաստան երթալավ իրեն համար նոր հաղթենիք մը սաեղծեց, և մեծամեծ աւանձնաշնորհումներ ձեռք բերաւ. մինչեւ իսկ հայկական առանձին գասարաններ հաստատուեցան հնու, և Հայերն իրենց յասաւկ տղգային օրէնքներավ կը կառասլարուէին։ Աւրիշ գաղթականութիւնն մըն ալ Հունագարիս գնաց հասասառուեցաւ, և հնու հայկական նոր քաղաք մը չինեց, որ կոչուեցաւ՝ Հայաքաղաք կոմ կուլ։ Ասանցմէ զատ՝ Եղիսաբաս ու Եւրոպայի զանազան քաղաքներն ալ խումբ խումբ գացին բնակեցան Հայերը, Բնչպէս՝ Վենետիկ, Լիվունի, Ամսթերդամ, Մարսէլլ, Աստրախան, Ղրիմ, և ուրիշ անդեր։ Խոկ Օսմանյաններու կողմէ երբ կ. Պոլիս առնաւեցաւ, անմոք՝ մեծամեծ խոսաւմներով Պոլիս հրաւիրեցին հայերը։

Պէտք է յիշել նաև Հնդկաստանի ու Ճավայի գաղթականութիւնները, որոնք Շահարասի կողմէ բռնի կերպով Պորոկաստան ասրաւոծ Հայոցմէ կազմուեցան։

Հարցարան. — 77. Հայոց վիճակն ի՞նչ էր Սագաներութեան կործանման ժամանակները։ — 78. Որո՞նք եղան ամենէն զիսաւոր հալածողներ։ — Հայերն ինչո՞ւ գաղթականութեան դիմեցին։ Ո՞ր երիբներն հաստատուեցան։

Խ. ԴԱՍ. — ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՃԱՆՈՒՄԸ

79. Հայաստան իր կրած աւերտումներէն ու կոտորածներէն ետք՝ ամբողջովին Պարսիկներու ձեռք անցաւ. բայց երկար ժամանակ չկրցան վայելել, այլ Օսմանցիներու արշաւանքներով՝ մեծագոյն մասն ասոնց բաժին ինկաւ։

80. Խակ Պարսկաստանի վրայ կատարուած ուռուսական յարձակումներով՝ ուրիշ մաս մըն ալ Ռուսաց ձեռք անցաւ, ինչպէս նաև ուռուսեթուրք պատերազմներու հետեւամքով՝ Տաճկաստանի մաս կազմող Հայաստանի շատ տեղերը ուսու կառավարութեան կողմէ գրաւուեցան։

Պատմած. — ԽՍՐԱՅԷԼ ՕՐԻ

Հայաստանի ժողովրդին քաշած ասաւապանքներուն զերջ գնելու համար՝ տակէ 200 տարիի չսոի առաջ Ս. Էջմիածնի մէջ Յակոբ Զուզոցեցի Կոթողիկոսին նախագահութեան տակ ժողով մը գումարուեցաւ, և որչոչեցաւ նորէն պատին ու եւրոպական պիտութիւններու զիմելով անոնց օգնութեամբ ազատել Հայաստանը։ Այս նըսպատակին համար Կոթողիկոսն ու Խորոցէլ Օրի անոնով Ղարաբաղցի կարիճ մը ճամփայ ելուն դէպ ի Եւրոպա. բայց երբ Պոյլա հասան, կաթողիկոսը վախճանեցաւ, իսկ Օրի միամինակ Եւրոպա անցաւ։ Հնի բաւուկան տարիներ կենալէ ետք՝ կարեւոր յանձնարարութիւններով ու խոռուումներով վերադարձաւ իր երկիրը։ Ղարաբաղ համայնքուն՝ մէլիքներն ու ազգեցիկ բէկերը ժողովով խորհր-

դակցեցաւ անոնց հետ։ Այս ժողովը պատեց Օրիի լնկեր տալ իրենց խորհրդակից Մինսու վարդապետը, և յանձնարարեց նորանոր գիմումները լնել, չմունալով նաև Ռուսաստանի Մեծն Պետրոս կոյարէն օգնութիւն խընդրել, որ սիրավ լնդգունեց Հայոց աղաջանքը։

Գործերն այսպէս յաջորդ կ'երթացին, և պատգամուորներն իրենց սպազմոնը սրանց կը կատարէն։ բայց օր մըն ալ Օրի հիւանդ իյնտլով մնեաւ։

Հարցարան. — 79. Օրի՞ մեռք անցած էր Հայաստան։ — 80. Ի՞նչպէս Ռուսաց մեռք անցաւ։ — Հայաստանի ազատութեան համար ինչե՞ր կատարուեցան։ Ի՞նչ զործեր տեսաւ Օրի։


ԽԱ. ԴԱՍ. — ՊԱՐԱԲԱՂԻ ՄԵԼԻՔՆԵՐԻ

81. Հայկական Արցախ, Ռւտի ու Միւնիք նահանգները, որոնք հիմակուան Ղարաբաղը կը կազմեն, Օրիի ժամանակ կը կառավարուէն հինգ կիսանկախ իշխաններու ձեռքով։

82. Այս իշխաններէն մէկը կը նատէր Գիւլիստան կամ Թալիշ, երկրորդը՝ Ջրաբերդ, երրորդը՝ Փաշէն, չորրորդը՝ Վարանդա, և հինգերորդը՝ Գիզակ։

Պատմած. — ՊԱՐԱԲԱՂԻ ՑԻՆԵՐՆ ԱՊԱՏԱՄԲՈՒԹԵԱՆ
ԿԲ ԴԻՄԵՆ

Խորոցէլ Օրիի մասնելէն ետք՝ ընկերը, Մինսու վարդապետ, իր պիմումները շարժնակեց։ Մեծն Պետրոս իր



ԴԱՒԻԹ ԲԷԿ

Խառնումը կրասիրելու համար զօրաւոր բանակով մը արշավեց Կապիկաս, զրաւեց Դարբանդ (=Տէրպէնա) քաղաքը, և մինչդեռ կը պատրաստուէր յարձակիլ Շամախիթի վրայ, յանկարծ ևս դարձաւ : Հայերն այլ ևս իրենց յոցը կարելով Մեծն Պետրոսէ, իրենց զվատն ճարը նոցեցան, և Դաւիթ-Բէկ անանավ քաջ Հայու մը ստածնորդութեամբ Դարբանդի լեռներուն վրայ ապստամբութեան ու միանգամանի պատառթեան դրօշը պարզեցին :

Ապստամբութիւնը շատ յաջող անցաւ, այնպէս որ շաջակայ Պարսիկներն ու Թափարմները կո՞մ հարստակութիւն յացանեցին հոյկական նոր կառավարութեան, և կամ ձգեցին փախան ուրիշ երկիրներ : Այս ուրախութեան միջոցին Դաւիթ-Բէկ մոռաւ դժբախառաբար, և յաջորդութեան ցաւալի վէճերն սկսան : Մեծամասնու-

թեան որոշմամբ Դաւիթ-Բէկի աջ բազուկը՝ Միխիթար յաջորդեց վերջապէս : Բայց նախանձու կողմը թշնամուկան դիրք բանել սկսաւ, և մինչև իսկ Դարբանդի սպառ-նոցով առաջկական բանակին զնաց անձնատուր եղաւ . առաջ Միխիթարի ուժերը ջլասեց, և հայկական նորաբողբոջ՝ տղաս կառավարութեան ասպարման պատճառ դարձաւ : առաջկական զօրքերն այլ ևս առանց դիմադրութեան հանդիպելու յարձակեցան Միխիթարի վրայ, որ՝ ցաւալի է ըսել՝ հայ դաւաճանի մը ձեւքով սպաննուեցաւ :

Ճարցարան. — 81. Հայկական սօթ նսհանգներուն մէջ կիշնայ Ղարաբալ: Ի՞նչպէս կը կառավարուէր: — 82. Ո՞ւր կը նստէին այս իշխանները: = Ի՞նչպէս պատահեցաւ Ղարաբաղի ապստամբութիւնը: Ի՞նչ վախճան ունեցաւ:

ԽԲ. ԴԱՍ. — ՀԱՅԵՐԸ ՏԱՀԿԱՍՍՆԻ ՄԷՋ

83. Երբ Հայուստանի մեծ մասը տաճիկ կուռալարութեան ձեւք անցաւ, թաթարական հաւածանքները վերական, որուն հետեւանքով ոչ միայն Հայերն այլ և Տաճկաստանի միւս բոլոր քրիստոնեայ ազգերը զանազան խժդժութիւններու մատնուեցան :

84. Ուուս կառավարութիւնը քրիստոնեաները պաշտպանելու պատրուակով պատերազմ հրատարակեց Տաճկաստանի դէմ, որ չարաշար կերպով յաղթուեցաւ :

Պատմած. — ՀՅ.ՅԿԱԿԱՆ ԽԵԳԻՔԻ

Հայսաստանի մէջ կասարուած բանի կրօնավիստութիւններ, համարձակ սւաղովկութիւններ, մասնաւոր չորդեր և տանց նման վայրուգութիւններ, որնք Համափ կառավարութեան զրդուալ կը կասարուէին, Հայերը բնաջինջ ւնելու նպաստիալ, սախեցին Հայերն իւրինց աղաղակները լորձրացնել և դիմել Եւրոպացի : Այսպէսով ծագեցաւ Հայկական խնդիրը :

1878-ին դեռ նոր առարտու էր սուսեւթուրք սպասերազմը, և Այ-Սթէֆանոսի մէջ եւրազական գեսպաններու ներկայութեամբ հաշառաթեան գաշինք կը կնքըւէր : Կ. Պոլսի ամպիներ Փատրիարք ներսէ Վարժապետեան՝ Հայոց կրոծ աստավոնքները նայն գեսպանածողովին ներկայացնելով գարման խնդրեց, և 16-րդ յօդուածը ձեռք բերաւ . բայց մի և նոյն տարին Փէրլինի մէջ գումարուած տրիչ գեսպանածողալ մը՝ Այ-Սթէֆանոսի դաշնապրաթիւնը չարագուիսելով, մեզ սահմանեցին 61-րդ յօդուածը, որ կ'ըսէ . «Բարձրագոյն Դուռը յանձն կ'առնէ առանց յափակումի գործադրել այն բալոր բարւոքումներն ու բարեկարգութիւնները, որ կը պահանջնեն հայութնակ նահանգներու տեղական պէտքերը . . .» :

Հարցարան. — 83. Երբ Հայաստան տաճիկ կառավարութեան ձեւը անցաւ՝ ի՞նչ կատարուեցաւ : — 84. Ի՞նչո՞ւ ու ուս կառավարութիւնը պատերազմ հաստարակեց Տաճկաստանի դէմ : — Ի՞նչպէս ձագեցաւ Հայկական խնդիրը : Ի՞նչ է 61-րդ յօդուածը :



ԽԵՐՍԷՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ԽԳ. ԴԱՍ. — ՀԱՅ ՅԵԳԱՓՈԽԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

85. «Առանց յապաղումի» գործադրաւելիք բարենորոգութիւնները մինչեւ հիմա չկատարուելէ զատ՝ խժդժութիւններն առելցան, որոնք առջի առոին նախ Հնչակեան և ապա Դաշնակցական Հայ Յեղափոխական երկու կարևոր մարմիններու առելցուելուն։

86. Այս մարմինները ժողովրդի ամեն խառնուն մէջ մանելով անոնց զիանակցութիւնն արթընցուցին, և յեղափոխական սուրբ նպատակն ու բարիքները քարոզեցին։

Պատմած. — ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾ'ՆԵՐ

Համբարի կառավարութիւնը Հայկական խնդիրը լուծեւու նոր միջոց մը զատօծ էր . այն է՝ Հայտասամբ բոլորովին պարզել Հայերէ, և անոնց առաջ բնակեցնել կա՛մ գտավթական Զէրքէմներ, և կոմ՝ Քիւրաներ։ Այս ծրագիրն իրականացնելու գործն այնքան ալ գիւրին չէր . ո՞չ մէկ Հայ պիտի աւգէր կամավճին թալուել իր օձափն և հեռանալ։ Արդ՝ «քաղաքակիրթ» Եւրոպայի աչքին առջեւ առջի առնեցան այն սասկափի կասորածները, որոնք յիշեցուցին Զարմաղանի և Լէնկթիմուրի օրերը . . . : Եւրոպական պիտութիւններն անսամբլաբար լուս հանդիսանես եղան 1895-ին ի վեր թէ՛ Կ. Պոլսի և թէ մանուռանդ Հայտասամնի մէջ կատարուած արիւնհեղութիւններուն . և այն պիտութիւններէն ո՞չ մէկը կառացուց տարիններէ ի վեր հասող անմեղ արիւնը։ Գանուեցան նոյն իսկ «քրիստոնեայ» պիտութիւն մը, որ իր թաթարական ծագումը



ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

ցոյց առաջ համոր մի՛ և նոյն դիւտյին ծրագիրը մշակեց . — Ծնջել Հայերը, և ազատ կերպով զրաւել անոնց պապեական հոգերը : Եւ սկսան Կովկասի կառորածները : Բայց Հայերն ինչպէս Զէլթունի յաղթական ապատամբութիւնով ցոյց տուին իրենց ցեղին անպարտելի ուժը, Կովկասի մէջ ալ լաւ դաս մը տուին թաթարական վոհմակներու :

Ճարցարան. — 85. Ի՞նչպէս ստեղծուեցան Հայ Յեղափոխական մարմինները : — 86. Ի՞նչ ըրին այս Մարմինները : — Ի՞նչ պատմառով սկսան հայկական կրոռորածները : Ի՞նչ զիքք բռնեցին Եւրոպական պետութիւնները : Հայերն ի՞նչպէս ցոյց տուին իրենց ուժը :

ԱՌՈՅ Ո ԿԼԻԴԱՆԻՑԼՐ ԽՆՉՈՉ ԽՆՉԻ ՀՎՃԱ ՀԱԼՈՎԱՏ ՄՋՄԱՅ

1312

2. Յաւելուտծ և քննութիւն «Յուցակին առապական կամ հայկական բնելուածեւ արձանագրութեանց» (Հիվեռնայ) : Վենեսարիկ 1896 : 5 դր.

3. Տառապական բնելուածեւ արձանագրութիւն Մանագկերտի : Վենեսարիկ 1897 : 5 դր.

4. Note on the Van Inscriptions. London 1897.

5. Ա. Համեմատական հետազօտութիւն մեր Յարափշայ և Բարեկացւոց Մերալդաքի : Բ. Տեղեկութիւն Վանայ արձանագրութեանց վրայ : Վենեսարիկ 1898 : 3 դր.

6. Պատկ մը Փրիդրիխ Միւլերի գերեզմանին վրայ : Վենեսարիկ 1898 : 3 դր.

7. A propos des deux sceaux hétéens. London 1898.

8. Un nouvelle inscription arméniaque ou vanneuse. Paris 1898-9.

9. Une nouvelle inscription byzantine. 1898-9.

10. Բանասէր . 1899, 1900, 1901, 1902, 1903, 1904, 1905, 1906, 1907 (մինչեւ Թ. տարւոց վերջը) 750 դր.

11. La stèle de Zouarthnotz. Paris 1901.

12. Զուարթնոց եկեղեցւոց բնելուածեւ արձանագրութիւնն : Բարիկ 1901 : 5 դր.

13. Le droit arménien depuis l'origine jusqu'à nos jours. Macon 1901. 10 դր.

14. Զինուորական օրէնք Ներսիսի Լամբրոնացւոյ : Բարիկ 1902 : 6 դր.

15. Օրուան մը մէջ լուսանկարիչ ՌԱՊԼ, տասնյ տւ-
տոցի : Բարիզ 1904: 3 դր:
16. Անիի յիշատակ (ալպօմ Անիի տւերակներու, 24
պատկերով ու Անիի յասակագիծով), Բարիզ 1904. 10 դր:
17. Procez verbal de Monsieur d'Argenson etc.
Paris 1906. 5 դր:
18. Քաղաքային օրէնք Ներսիսի Լամբանացւոյ, բառ
Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լեւնի թագաւորաց Հում-
մայեցւոյ . Բարիզ, 1907 12 դր:
19. Jacques II, roi d'Aragon, et Oschin, roi de la
Petite Arménie, (1319—1320). Paris 1908 12 դր.
20. Լեւնի Ե. Վերջին թագաւոր Հայոց . Բարիզ 47.50
21. Դամբարան Լեւնի Ե. (ընտիր թզթի վրայ) 10.—
» » » հասարակ » » 5.—
22. Նոր դասագիրք Հայոց Պատմութեան (Ա. տարի) 5.—
23. Հին Հայաստանի քարտես (լաթի վրայ) 2.50

ՄՈՏԵՐՍ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵ՞Ն


- Նոր դասագիրք Հայոց Պատմութեան Բ. և Գ. տարի:
» » Օսմանեան » Ա. Բ. և Գ. »
» » Բնդհանուր Ազգաց Պատմութեան Ա. Բ.
և Գ. տարի:


Առձեւն Բառարան Հայերէն աշխարհիկ լեզուէ Ֆրանսերէն :
Essai sur l'Histoire de la Littérature Ottomane.
Արտքսի աւազանը (մանկավարժական աշխարհացոյց Հա-
յուսապահի) :

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ՝

Note sur la conjugaison arménienne, par A. Meil-
let. 6 դր.

- Notes sur quelques manuscrits arméniens avec reliure
à inscription, par F. Macler 6.—
- Քաղկեդանական Ժաղան և Հայաստանեցց եկեղեցի,
(Սույնաս Վ. Պարոնեան), 1902 Բարիզ 13.—
- Մի կարծիք հայ նախարարների մասին 8.—
- Քննական Պատմութիւն 19րդ դարու Հայ Դպրութեան,
(Մ. Յովհաննէկւեան), Բարիզ 25.—
- Քաղկանական Քերականութեան ծագումը և օգտա-
ները 6.—
- Քննական Պատմութիւն Հայոց (Սկսնակ Բանասէր) 6.—
- Քեսացիք կամ Մուցուած կայսրութեան մը պատմու-
թիւնը, (Յ. Վ. Յակոբեան), Բարիզ 15.—
- Զամ-դիւլում (Ճողվեց Հայկ Տ. Սատուածառուեան), Բա-
րիզ, 1903 6.—
- Վերաճութիւն Հայաստանի, 1904, Բարիզ, (գրեց ոռու
պատմաբան Վ. Պօսո)
- Անիի կործանումը, պատմական վէպ, (Բագրատ Այվազ-
եանց), Բարիզ, 1905 10.—
- Ուկի խարսպան 6.—
- Հայոց հին կրօնները 12.—
- Իրանի հերոսները 8.—
- Հայ վաճառականութիւնը Խուսփայում 12.—
- Ազգի մը պահպանութեան պայմաները, բանախօսեց
Տօք. Տաղաւարեան, Բարիզ, 1906 6.—
- Ս. Մերսոսի և զիերու զիւտի պատմութեան ազբիւր-
ներն ու անոնց քննաւթիւնը, (Հ. Անտեան), Բա-
րիզ, 1907 12.—
- 1896 թուին Ս. Էջմիածնում գտնուած հին պղնձեղէն
ամաներու ցուցակը և արձանագրութիւնները . (Գա-
րնաս Տ. Միրցէան). Բարիզ, 1906 12.—
- Յիշատակարան Պատմանեան Գրիգոր Պատրիարքի, (Բար-
կ. Վ. Կիւղէկւեան), Բարիզ, 1906 25.—





ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ .

ՀՀ Ազգային գրադարան



NL0245990

ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ

Կ. ՊՈԼԻՍ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

8. Գաղանձեան.—Աշխարհաբար Քերականութիւն (Տար-
բական դասընթացք) 4 դր.

» Աշխարհաբար Քերականութիւն (Մի-
ջն դասընթացք) 6 դր.

LE FRANÇAIS.—Cours complet pour l'enseignement
direct de la langue française. Première partie 3 դր.
» II partie 5 դր.

6. ZOBOU. — Correspondance et terminologie com-
merciales. Français-Turc 20 դր.

ՄԱՍԼՈՅ ՏԱԿ

8. Գաղանձեան.—Աշխարհաբ. Քերականութիւն (Բարձ-
րագոյն)

LE FRANÇAIS.—III partie

4. Բանակեան.—Ազդ. Պատմութիւն (Միջն)

» Essai sur l'Histoire de la Littérature
Ottomane

II. Եռլպարեան.—Առենոն Ֆրանս-Հայ բառարան

ԳԻՆ 5 ԴՐ.

ՏՐԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
Զարմաթելլար Յակոբեան Խան